Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար իրականացնող իրավապահ մարմինների վերապատրաստման կարիքների գնահատման

ԶԵԿՈՒՅՑ

This Project is co-funded by the European Union

Office in Yerevan

Դեկտեմբեր, 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 2
ՆԱԽԱԲԱՆ 3
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 5
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8
ա) Մարդկանց թրաֆիքինգը. Ընդհանուր բնութագիր, մասշտաբներ և աշխարհագրություն 8
բ) Թրաֆիքինգի ուղիները 11
գ) Վիճակագրական տվյալներ 13
2. ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 15
ա) Գործողությունների ազգային ծրագիր 15
բ) Օրենսդրական դաշտ 16
գ) Իրավապահ մարմինների կողմից ձեռնարկվող գործողությունները 20
դ) Դատախազության կողմից ձեռնարկվող գործողությունները 22
ե) Դատարանների կողմից ձեռնարկվող գործողությունները 24
զ) Գենդերային նկատառումներ 25
3. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԿԱ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 27
4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 38
Կարճաժամկետ միջոցառումներ 41
Միջնաժամկետ միջոցառումներ 43
5. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ 47
6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 48

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱՄՔՈՐ	Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՏ	Աշխատանքային տեսչություն/աշխատանքային տեսուչ
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԳԱԾ	Գործողությունների ազգային ծրագիր
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԹՏ	Թրաֆիքինգից տուժած[1]
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԷ	Միացյալ Արաբական Էմիրություններ
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
UNODC	Միավորված ազգերի կազմակերպության Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ICMPD	Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն
ՄԳՀ	Միջգերատեսչական հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՈՒԱՄ	Ողողորդման ազգային մեխանիզմ
CEDAW	Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
UNIFEM	ՄԱԿ-ի կանանց հարցերով զարգացման հիմնադրամ
UNICEF	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

[1] Համարվում է, որ “տուժած” (victim) բառը նսեմացնում է անձի կարգավիճակը: Այնուհանդերձ, որոշ դեպքերում նպատակահարմար է օգտագործել այդ բառը: Այլ դեպքերում օգտագործվել է “թրաֆիքինգի ենթարկված անձ/անձինք” արտահայտությունը:

Սույն զեկույցի անգլերեն տարբերակի և հայերեն թարգմանության միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի բնօրինակին՝ անգլերեն տարբերակին:

ՆԱԽԱԲԱՆ

Մարդկանց թրաֆիքինգը Հայաստանում քրեականացվել է 2003թ. օգոստոսին՝ նոր Քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելով: Հաշվի առնելով ոստիկանության, ԱԱԾ սահմանապահ ծառայության, դատախազության և դատական համակարգի (այսուհետ՝ իրավապահ մարմիններ[2]) առանցքային դերը թրաֆիքինգը և հարակից հանցագործությունները բարեհաջող կանխարգելելու, հայտնաբերելու, քրեորեն հետապնդելու և պատժելու գործում, անպայմանորեն անհրաժեշտ է զարգացնել երկրի իրավապահ մարմինների և հարակից ոլորտներում աշխատողների կարողությունները: Թրաֆիքինգի ոլորտում իրավապահ մարմինների վերապատրաստման կարիքներն ավելի լավ հասկանալու համար 2007թ. սեպտեմբերին Հայաստանում իրականացվեց վերապատրաստման առկա կարողությունների ամբողջական գնահատում:

Գնահատումն իրականացվել է ՄԱԶԾ-ի Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի[3] և ԱՄԿ/ԵԱՀԿ/ICMPD ծրագրի համատեղ ջանքերով: ՄԱԶԾ-ի ծրագրի նպատակն է՝ նպաստել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ներպետական համակարգի հետագա կատարելագործմանը՝ քաղաքականության և ինստիտուցիոնալ մակարդակներով, ինչպես նաև՝ ուղղակի աջակցություն ցուցաբերել թրաֆիքինգից տուժած անձանց: ԱՄԿ/ԵԱՀԿ/ICMPD ծրագրի նպատակն է՝ թրաֆիքինգի դեմ պայքարի համապարփակ մոտեցումներ մշակել Հայաստանում՝ համագործակցելով ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի հետ: Համատեղ աշխատանքի շրջանակներում, մարդկանց թրաֆիքինգի ոլորտում իրավապահ մարմինների վերապատրաստման կարիքները գնահատելու նպատակով Հայաստան հրավիրվեց միջազգային փորձագետների խումբ: Վերջինիս խնդիրն էր՝ բացահայտել իրավապահ գործունեության և թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտներում վերապատրաստման կարիքները և առաջարկություններ մշակել վերապատրաստման ապագա ռազմավարության վերաբերյալ:

Հայաստան կատարված այցին նախորդել է ԵԱՀԿ-ի և ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակների աշխատողների կողմից միջազգային փորձագետներին տրամադրված փաստաթղթերի և գրականության ուսումնասիրությունը:

Ժամանակահատված.
Երկրի տարածքում գնահատման աշխատանքներն իրականացվել են 2007թ. սեպտեմբերի 3-ից 17-ը:

Խմբի անդամները.
Միջազգային փորձագիտական խմբի անդամներ.
Իլիաս Խացիս, Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի ծրագրի համակարգող, UNODC.
Մարք Քոլհաուն, տարածաշրջանային համակարգող, UNODC.
Էնջելա Մըքեյ, թրաֆիքինգի դեմ պայքարի վերապատրաստման հարցերով խորհրդատու, ICMPD.

---

[2] Զեկույցն անդրադարձել է նաև Աշխատանքի պետական տեսչության դերին:

[3] Ծրագրի լրիվ անվանումը՝ "Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագիր. աջակցություն կարողությունների զարգացմանը և օգնություն տուժածներին": Ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ՝ Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:

Միջազգային փորձագետներին օժանդակող ներպետական խմբի անդամներ.
Հեղինե Գյուլնազարյան
Դավիթ Հակոբյան

Տարածքը.
Գնահատումն իրականացվել է Երևանում, Բագրատաշենի սահմանակետում, Վանաձորում (Լոռու մարզ) և Զվարթնոց միջազգային օդանավակայանում:

Ժամանակացույց.
Ամբողջական ժամանակացույցի և հարցազրույցների մասնակիցների ցուցակը տես **Հավելված 1-ում**:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում: Խնդիրը դարձել է հրապարակային քննարկումների առարկա: Մշակված է բարենպաստ օրենսդրություն: Քաղաքացիական հասարակությունը և իրավապահ մարմինները բարեհաջող կերպով համագործակցում են վերապատրաստման որոշ ոլորտներում: Այս հիմքի վրա հնարավոր կլինի ապագայում իրավապահ կառույցների վերապատրաստման արդյունավետ ծրագիր ստեղծել:

Մարդկանց թրաֆիքինգը Հայաստանում բնորոշվում է որպես “նոր” հանցագործություն, որը, չնայած հրապարակային քննարկումներ անցկացնելուն և հանրության իրազեկությունը բարձրացնելուն ուղղված զգալի ջանքերին, դեռ լիարժեքորեն չի ընկալվում: Թրաֆիքինգի կազմակերպիչներին, նրանց գործողություններից տուժած անձանց և կատարված հանցանքները նկարագրելու համար իրավապահ մարմինների և պետական որոշ պաշտոնյաների օգտագործած բնորոշումները հետևողական չեն և զուրկ են ստույգ սահմանումներից: Դա վկայում է, որ թե՛ հանցագործության (հանցագործությունների) առանձնահատկությունների, թե՛ կանխարգելման, քննության և քրեական հետապնդման համար անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ պատկերացումները բավարար չափով հստակ չեն:

Հայաստանը միացել է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային իրավական փաստաթղթերի մեծ մասին: Ներպետական մակարդակով օրենսդրություն հիմնականում գոյություն ունի, թեև օրենքների կիրարկումը դեռևս բավարար մակարդակի չի հասել. այդ պատճառով մինչ օրս հիմնականում մեղադրական դատավճիռներ են կայացվել թրաֆիքինգի կազմակերպիչների միջին շերտի ներկայացուցիչների (գլխավորապես՝ կանանց) նկատմամբ, ովքեր, հավանաբար, նույնպես “վիկտիմիզացիայի” են ենթարկվել:

Ներպետական մակարդակով ՀՀ վարչապետի 14.11.2002թ. թիվ 591-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որի խնդիրը պետք է Կառավարությանը թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը լիներ: Հանձնաժողովը նախագահում է Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը:

Թրաֆիքինգից տուժած անձանց վերաբերյալ պատկերացումներն իրավապահ մարմիններում միատեսակ են, իսկ տուժածներին նկարագրելու համար օգտագործվող ձևակերպումները վկայում են մարդկանց թրաֆիքինգի հանցագործության առանձնահատկությունների և գործընթացների վերաբերյալ ներքին շփոթության և ոչ հստակ պատկերացումների մասին:

Աշխատանքային շահագործման փաստերը գրեթե համընդհանուր կերպով ժխտվում են կամ անուշադրության մատնվում, բացառությամբ մարզային ՀԿ-ների, որոնք անժխտելի ապացույցներ են ներկայացնում դրանց վերաբերյալ: Աշխատանքային միգրացիայի գոյության փաստն ընդհանուր առմամբ ընդունվում է և բացատրվում որպես խորհրդային ժամանակների սեզոնային միգրացիայի մնացորդային դրսևորում:

Իրավապահ մարմինների համար իրականացվող վերապատրաստումները պարբերական և հետևողական չեն: Վերապատրաստման ամենածավալուն ծրագրերն իրականացնում են տեղական և միջազգային ՀԿ-ները, ինչպես նաև՝ Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄԿԿ): Իրավապահ մարմինների ներսում սակավաթիվ են նախաձեռնությունները՝ ապահովելու կանոնավոր, արդիական և բարձրորակ վերապատրաստում համապատասխան ծառայությունների աշխատողների համար:

Ակներև է, որ արտաքին աջակցությամբ իրականացված վերապատրաստումն անհամաչափորեն կենտրոնացել է ԹՏ-ներին պաշտպանելու և օգնելու խնդիրներին՝ քիչ ուշադրություն դարձնելով իրավապահ մարմինների աշխատանքում պահանջվող կանխարգելման միջոցառումներին և նման հանցագործությունների քննության ժամանակակից մեթոդներին:

Իրավապահ մարմինների աշխատողների վերապատրաստման կարիքների զգալի մասը մնում է չբավարարված, քանի որ այս խնդրով չեն կարող և չպետք է ամբողջապես զբաղվեն հասարակական կազմակերպությունները: Վերապատրաստման ծրագրերը պետք է համակարգեն և կազմակերպեն համապատասխան պաշտոնյաներին վերապատրաստելու պարտավորություն կրող պետական մարմինները՝ միևնույն ժամանակ դրանք ենթարկելով խիստ գնահատման և վերլուծության: Որպեսզի վերապատրաստումը լինի շարունակական, տարբեր իրավապահ մարմիններում պետք է ունենալ բարձրակարգ ուսուցանողներ, ովքեր լիազորված կլինեն վերապատրաստելու ծառայության բոլոր մակարդակների ներկայացուցիչներին:

Նախկին խորհրդային համակարգի ժառանգությունը, որին անդրադարձան հարցվողներից շատերը, հանգեցրել է կարծր հիերարխիայի ձևավորման, որում հրահանգներն իջեցվում են վերևից, և չեն խրախուսվում անձնական նախաձեռնությունները և հանցագործությունների լիարժեք քննությունը՝ բարդ կառուցվածք ունեցող հանցավոր կառույցները բացահայտելու և արդարադատությունը ԹՏ-ներին մատչելի դարձնելու համար:

Այդ ամենի հետևանքն այն է, որ հասարակական կազմակերպություններն առաջատար դեր են ստանձնում և պարտավորվում կատարել միջոցառումներ, որոնք պետք է իրականացներ պետությունը: Ուստի, մոտեցումները հետևողական չեն: Սակավաթիվ են հաստատված ստանդարտ ընթացակարգերը, և չի իրականացվում տվյալների արժանահավատ, միասնական հավաքագրում:

Այսուհանդերձ, իրավապահ մարմինները հայտնում են, որ գոհ են մինչ այժմ ՀԿ-ների իրականացրած վերապատրաստման ծրագրերից: Նրանք ընդունում են, որ անհրաժեշտ է բարելավել վերապատրաստումների իրականացման համակարգը և նշում, որ ցանկալի կլիներ ավելացնել միմյանց ու միջազգային կառույցների հետ փոխգործակցության և համագործակցության ծավալները:

Քանի որ մարդկանց թրաֆիքինգը “նոր” երևույթ է, հնարավոր է օգտվել վերապատրաստման նոր մեթոդներից և բաց գործելակերպ որդեգրելու պատրաստակամությունից:

Ակնհայտ է, որ որոշ ՀԿ-ների և իրավապահ կառույցների միջև բարձր է վստահության մակարդակը. անձնական կապերի և հետևողական ջանքերի շնորհիվ նրանք գնահատում են միմյանց կարողությունները և պատասխանատու վերաբերմունքը: Այդուհանդերձ, Երևանում և մարզերում պաշտոնյաների միջև ընկալումների և համագործակցության մակարդակի զգալի տարբերություններ կան:

Իրավապահները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները նշում են, որ մարդկանց թրաֆիքինգի ծավալներն ավելանում են: Այս համոզմունքը բխում է նրանց մասնագիտական փորձից և դիտարկումներից, այլ ոչ արժանահավատ և համընդհանուր կարգով համաձայնեցված վիճակագրական տվյալներից:

Հաշվի առնելով համոզմունքն առ այն, որ տուժողների թիվն ավելանում է, ինչպես նաև թրաֆիքինգի հանցագործության մասին հանրության իրազեկության բարձրացումը և իրավապահ մարմինների և ՀԿ-ների միջև ձևավորված համագործակցության հիմքերը և փոխադարձ հարգանքը, ժամանակն է Հայաստանի իրավապահ մարմինների համար ստեղծել մնայուն, տեղական կառույցներին պատկանող և բարձրակարգ վերապատրաստման և ուսուցման ծրագիր: Թրաֆիքինգի դեմ պայքարի ներպետական օրենսդրության վերանայումը և թրաֆիքինգի քրեական հետապնդման բարելավումը նշվել են որպես գերակայություններ թրաֆիքինգի դեմ պայքարի 2007-2009թթ. գործողությունների ազգային ծրագրի նախագծում (Նպատակ 1): ԳԱԾ-ի արդյունավետ իրագործմանն աջակցելու համար որոշակի դերակատարում պետք է ունենան ՀԿ-ները, սակայն այս հանցագործության դեմ արդյունավետորեն պայքարելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ողջ շրջանակը տրամադրելու առաջնային պատասխանատուն Հայաստանի Հանրապետության կառավարությունն է:

Սույն զեկույցում ուրվագծվում են նշված նպատակների իրագործմանը նպաստող ծրագրի մանրամասները:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկանց թրաֆիքինգը սահմանվում է հետևյալ կերպ.
"Շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը՝ ուժի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգմամբ, խարդախությամբ, խաբեությամբ, խոցելի վիճակի հետ կապված գերակա դիրքի չարաշահմամբ, կամ մեկ այլ անձի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի համաձայնությունը ստանալու նպատակով վճարումներ կամ օգուտներ տալու կամ ստանալու միջոցով:

Շահագործումը ներառում է առնվազն հետևյալը. այլ անձանց պոռնկության կամ սեռական այլ շահագործումը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակի հասցնելը կամ կախյալ վիճակի մեջ դնելու կամ մարդու օրգանները վերցնելը:

Նախատեսվող շահագործման համար մարդկանց թրաֆիքինգից տուժած անձի համաձայնությունը որևէ նշանակություն չունի, եթե կիրառվել են (վերոհիշյալ) միջոցները":

Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխելու, հետապնդելու և պատժելու մասին (2000թ.):

ա) Մարդկանց թրաֆիքինգը. Ընդհանուր բնութագիր, մասշտաբներ և աշխարհագրություն

Մարդկանց թրաֆիքինգի առումով Հայաստանը համարվում է ծագման երկիր: Թեև հայտնի են դեպքեր, երբ Հայաստանը հանդիսացել է նպատակակետ կամ տարանցիկ փոխադրման երկիր, նման դեպքերն, ըստ երևույթին, հազվադեպ են[4]: Տեղական մակարդակով ուշադրությունը կենտրոնացվել է հիմնականում սեռական շահագործման նպատակով կանանց դեպի Միացյալ Արաբական Էմիրություններ (ՄԱԷ) և Թուրքիա թրաֆիքինգի ենթարկելու խնդրին: ՀԿ-ների տվյալներով, զգալի թվով տղամարդիկ աշխատանքային շահագործման նպատակով փոխադրվում են Ռուսաստան:

Հայտնի են անչափահասների թրաֆիքինգի մի քանի դեպքեր[5]: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը մտահոգություն է հայտնել, որ ծայրահեղ խոցելի լինելու պատճառով թրաֆիքինգի զոհ կարող են դառնալ փողոցներում միայնակ ապրող սակավաթիվ թափառաշրջիկ երեխաները և թափառող ընտանիքների երեխաները: Այդ տեղեկությունների իսկությունը ենթակա է ճշգրտման:

---

[4] Մինչ օրս Հայաստանում, որպես թրաֆիքինգից տուժած անձինք, հայտնաբերվել են Ուզբեկստանի, Ուկրաինայի, Ռուսաստանի և Կանադայի քաղաքացիներ:

[5] Նախկին տարիներին հայտնաբերվել են երեխաների թրաֆիքինգի օրինակներ: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող աշխատանքներում առանձնակի ուշադրություն է դարձվել մանկատների և գիշերօթիկ դպրոցների շրջանավարտ անչափահասների և այլ հնարավոր տուժածների խոցելիությանը: Լրատվամիջոցների 2005 թվականի հրապարակումներում (www.hetq.am) նշվում է, որ դեպի Միացյալ Արաբական Էմիրություններ թրաֆիքինգի են ենթարկվել և կանայք, և երեխաներ:

Մարդու օրգանների/հյուսվածքների թրաֆիքինգի դեպքեր չեն արձանագրվել:

Թրաֆիքինգից տուժածների վիճակում առավել հաճախ հայտնվում են սոցիալապես խոցելի խմբեր ներկայացնող կանայք: Նրանք, որպես կանոն, միայնակ, այրի, ամուսնալուծված կամ ամուսինների կողմից լքված կանայք են, ովքեր կենսապահովման որևէ այլ աղբյուր չունեն: Հաճախ նրանց խնամքի տակ են գտնվում երեխաներ և տարեցներ: Կրթություն կամ, ավելի հաճախ, աշխատանք գտնելու հնարավորություններ չունենալու պատճառով նրանք ի վիճակի չեն բնականոն ճանապարհով ապրուստ հայթայթել ընտանիքի համար: Իրավապահ մարմինների և ՀԿ-ների տրամադրած տեղեկությունները թրաֆիքինգից տուժած անձանց տարիքի մասին զգալիորեն տարբերվում են: Ոստիկանությունը և դատախազությունը պնդում են, որ 20 տարեկանը չբոլորած կամ 20-25 տարեկան երիտասարդ կանանց թրաֆիքինգը Հայաստանում մեծ տոկոս չի կազմում, մինչդեռ ՀԿ-ները պնդում են, որ 44%-ը 18-24 տարեկան են[6]: Սա կարևոր է 30 տարեկանը չբոլորած կանանց՝ ՄԱԷ մուտքի սահմանափակումների պայմաններում նրանց թիվը պարզելու համար: Կարևոր է նկատի ունենալ, որ վիճակագրական տվյալները հիմնված են միայն այն հայտնաբերված ԹՏ-ների թվի վրա, ովքեր ուղղակի աջակցություն են ստացել: Իհարկե, դրանք բացարձակ թվեր չեն:

Տուժածները ծագումով և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերից են: Գործազրկության և արտագաղթի ցուցանիշները բարձր են այնպիսի մարզերում, ինչպիսին է, օրինակ, Լոռու մարզը, որը լրջորեն տուժել է թե՛ 1988թ. ավերիչ երկրաշարժից, թե՛ Խորհրդային Միության փլուզումից հետո տեղի արդյունաբերական տնտեսության քայքայումից:

Իրավապահ մարմինների ներկայացուցիչները ենթադրում են, որ որոշ կանայք տեղափոխվում են քաղաքային կենտրոններ, հատկապես Երևան, աշխատանք գտնելու նպատակով, սակայն ի վերջո սկսում են զբաղվել մարմնավաճառությամբ: Այնուհետ, թրաֆիքինգի տեղացի կազմակերպիչները և/կամ կավատները հավաքագրում են նրանց՝ Հայաստանից դուրս սեռական շահագործման ենթարկելու նպատակով:

Ոստիկանության դիտարկումների և դատախազության վիճակագրական տվյալների համաձայն, տեղական կարևորագույն առանձնահատկություններից է այն, որ կանանց հավաքագրումն իրականացնող թրաֆիքինգի գրեթե բոլոր կազմակերպիչները կանայք են: Որպես կանոն, քաղաքային և գյուղական բնակավայրերում հավաքագրումն իրականացնում են ընտանիքի անդամները, ընկերները, բարեկամները, հարևանները կամ աշխատանքային գործընկերները, այսինքն՝ թրաֆիքինգի ենթարկվողին ծանոթ անձինք:

Հավաքագրման և աշխատանքի պայմանների վերաբերյալ իրավապահ մարմինների և ՀԿ-ների ունեցած տվյալները հստակ չեն, սակայն կարելի է փաստել, որ հաճախ թրաֆիքինգի ենթարկվող կանանց տրվում են կեղծ խոստումներ, իսկ որոշ դեպքերում հավաքագրվում են արդեն իսկ մարմնավաճառությամբ զբաղվող կանայք: Վիճահարույց է այն հարցը, թե ստացվե՞լ է արդյոք այդ կանանց համաձայնությունը: Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) և Ոստիկանությունը պնդում են, որ ԹՏ-ներից շատերը «գիտեն, թե ինչ է իրենց հետ տեղի ունենալու»: Պարզ չէ, թե ինչից է բխում նման համոզվածությունը:

[6] ՄԱԶԾ, UMCOR, “Հույս և օգնություն” ՀԿ, “Ժողովրդավարությունն այսօր” ՀԿ «Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը. 2003թ. հոկտեմբեր-2007թ. մարտ», Երևան 2007թ.

ԱԱԾ-ի ներկայացուցիչները նշեցին, որ օրենքից մեկ քայլ առաջ լինելու նպատակով թրաֆիքինգի կազմակերպիչները փոխում են իրենց մարտավարությունը, որի հետևանքով ԹՏ-ներն այլևս չեն համապատասխանում դասական սահմանմանը և շատ դեպքերում տալիս են իրենց համաձայնությունն ու գիտեն, թե ինչ աշխատանք է իրենց սպասում:

Տերմինների առումով հստակության և ճշգրտության պակաս կա, որի հետևանքով պարզ չէ, թե ինչպիսին է թրաֆիքինգի կազմակերպիչների / հավաքագրողների մասնակցությունը և դերը: Ոստիկանները և իրավապահ մարմինների այլ աշխատողներ հակված են որպես հոմանիշներ օգտագործել մի կողմից “մարմնավաճառ”-“թրաֆիքինգի ենթարկված կին”, մյուս կողմից՝ “կավատ”-“թրաֆիքինգի կազմակերպիչ” արտահայտությունները: Այդուհանդերձ, քրեական հետապնդման և դատապարտման նպատակով խիստ կարևոր է սահմանազատել և տարբերակել տերմինները: Տերմինների ոչ ճշգրիտ գործածությունը շփոթություն է առաջացնում և կարող է բացասաբար ազդել թրաֆիքինգի հանցագործության վերաբերյալ հանրային պատկերացումների վրա:

ՄԱԷ-ում սեռական ծառայություններ մատուցելու նպատակով Հայաստանում կանանց հավաքագրող “թրաֆիքինգի կազմակերպիչներին” անհրաժեշտ է տարբերակել այն “կավատներից”, ովքեր գործ ունեն այդ կանանց հետ՝ վերջիններիս՝ ծուղակում հայտնվելու և հարկադրաբար սեռական շահագործման ենթարկվելու ընթացքում: Կավատությունը և մարդկանց թրաֆիքինգը կարող են առանձին հանցագործություններ լինել՝ կախված կոնկրետ հանցագործության հանգամանքներից: Կավատները տեխնիկապես կարող են դատապարտվել որպես թրաֆիքինգի կազմակերպիչներ, քանի որ նրանք իմացել են պայմանները, մասնակցել են հանցագործության կատարմանը և վերահսկել ու “վաճառքի են հանել” տուժած անձանց: Կամ, նրանց կարող են թրաֆիքինգի հանցագործությունից պակաս ծանր մեղադրանք առաջադրել:

“Թրաֆիքինգի կազմակերպիչի” նպատակն է՝ հավաքագրել, փոխադրել, թաքցնել և վերահսկել տուժած անձանց՝ աշխատանքային կամ սեռական շահագործման նպատակով: Օգտագործվող միջոցները միշտ կապված են ահաբեկման, սպառնալիքի, հարկադրանքի և ֆիզիկական ու հոգեկան ճնշման այլ տեսակների հետ:

Թրաֆիքինգ իրագործող որևէ անձ միայնակ չի գործում: Հավաքագրողը հաստատապես կապված է շահագործման շղթայի մյուս մասնակիցների հետ: Այդ կապերի բարդությունը, խորությունը և սերտությունը կախված են յուրաքանչյուր դեպքի առանձնահատկություններից:

Քանիցս նշվել է, որ Հայաստանում “թրաֆիքինգի կազմակերպիչները” միայնակ գործող և հետախուզման մեջ գտնվող հանցագործներ են, ովքեր կազմակերպված հանցավոր կառույցների մաս չեն կազմում: Անկախ թրաֆիքինգի ծավալներից, նշված պնդումը հազիվ թե մոտ լինի իրականությանը, եթե հաշվի առնենք, որ թրաֆիքինգ իրականացնող տեղացիները կազմակերպում են թրաֆիքինգի ենթարկվող անձանց փաստաթղթերի ձևակերպումը, նրանց փոխադրումը, ընդունումը և “աշխատանքի” վայրի ընտրությունը:

Ինչ վերաբերում է աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկված տղամարդկանց, ապա թրաֆիքինգի կազմակերպիչները, ըստ երևույթին, նույնպես տեղացիներ են. տղամարդիկ հավաքագրվում և փոխադրվում են կազմակերպված խմբերով (մինչև 40 հոգանոց) և մինչև երկու տարի ժամկետով աշխատում Ռուսաստանում՝ շինարարության ոլորտում: Նրանց տեղաշարժի ազատությունը սահմանափակվում է: Անձնագրերը նրանցից վերցվում են: Աշխատանքի պայմաններն անբավարար են, և նրանք ստանում են վաստակած աշխատավարձի չնչին տոկոսը միայն: Հաճախ այս

ամենն ուղեկցվում է սպառնալիքներով, որ այդ աշխատանքի պայմանների մասին բացահայտելու դեպքում կպատժվեն նրանց ընտանիքի անդամները:

Երևանում գտնվող ՀԿ-ները և իրավապահ մարմինները մտահոգություն չհայտնեցին տարածաշրջանային բնույթի այս երևույթի մասին: Խնդրի մասին նշված չէ նաև «Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը»[7] վիճակագրական գրքույկում:

բ) Թրաֆիքինգի ուղիները

Հայաստանը ցամաքով շրջապատված երկիր է: Թուրքիայի և Ադրբեջանի հետ սահմանները ռազմականացված են և մնում են փակ: Հայաստան մուտքի հիմնական կետերը ցամաքային են՝ Վրաստանով, ինչպես նաև Երևանում գտնվող Զվարթնոց միջազգային օդանավակայանով: Մեկ սահմանակետ կա նաև Իրանի հետ սահմանին, որով անցնող ուղևորաշրջանառության ծավալները, սակայն, ցածր են: Պարզվել է, որ Հայաստանից թրաֆիքինգի երեք ուղիներ կան: Դրանք, ըստ երևույթին, անփոփոխ են, թեև երբեմն կարող են լինել շեղումներ:

<u>Ուղի 1</u>

Թրաֆիքինգի ենթարկվող կանայք ուղղակիորեն տարվում են Միացյալ Արաբական Էմիրություններ՝ օրինական անձնագրերով, օրինական ճամփորդական գործակալությունների միջոցով կամ թրաֆիքինգի կազմակերպչի ձեռք բերած այլ փաստաթղթերով: Մուտքի թույլտվությունը, որը կազմակերպում է ճամփորդական գործակալությունը, ստացվում է ՄԱԷ ժամանելուց հետո: Այսուհանդերձ, ճամփորդական գործակալությունները տոմսերի վաճառքը կատարում են միայն ուղևորվող անձի մուտքի թույլտվության տրամադրման փաստի հաստատումից հետո:

Չնայած ՄԱԷ-ի ընդունած՝ խտրականություն պարունակող օրենսդրական նորմերին, որոնցով արգելվում է 30 տարեկանից ցածր կանանց մուտքը ՄԱԷ առանց ուղեկցող տղամարդու, կարծիք կա, որ այդ սահմանափակումը հազվադեպ է խնդիրներ առաջացնում: Որոշ դեպքերում հայ կանայք կեղծ ամուսնություններ են ձևակերպում, որպեսզի խուսափեն օրենքի նշված պահանջներից: Նրանց դիմավորում են “ամուսինները” կամ թրաֆիքինգ կազմակերպող շղթայի մյուս անդամները, ովքեր էլ նրանց տանում են “աշխատանքի” վայր:

Կանայք հավաքագրվում են որոշակի կեղծ խոստումների միջոցով. նրանց առաջարկվում է մատուցողի, դայակի, պարուհու, աղախնի աշխատանք: Ժամանումից հետո նրանցից վերցնում են փաստաթղթերը և ստիպում զբաղվել մարմնավաճառությամբ կամ սեռական շահագործման այլ ձևերով: Ստացված տեղեկությունների համաձայն, նրանց տեղաշարժի ազատության չափը տարբեր կարող է լինել:

ՄԱԷ այցելած հայ լրագրողների ռեպորտաժներից պարզ է դառնում, որ այս թրաֆիքինգը շատ կազմակերպված է՝ շահագործման հստակ դրսևորումներով[8]: 2005 թվականի ապրիլին նրանք պնդում էին, որ մոտ 2,000 հայ մարմանավաճառներ են աշխատում ՄԱԷ-ում և Պարսից ծոցի այլ պետություններում:

---

[7]ՄԱԶԾ, ԱՄՔՈՐ, “Հույս և օգնություն” ՀԿ, “Ժողովրդավարությունն այսօր” ՀԿ «Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը. 2003թ. հոկտեմբեր-2007թ. մարտ», Երևան 2007թ.:
[8] Տես www.hetq.am

Փորձագետների խումբը թրաֆիքինգի այս ուղու վերաբերյալ տեղեկություններ է ստացել “Զվարթնոց” օդանավակայանի սահմանապահներից (ինչպես նաև ՀԿ-ներից), ովքեր հարցազրույցներ են անցկացնում ՄԱԷ-ից վտարված և Հայաստան վերադարձող կանանց հետ: Այս ուղու տարատեսակ է նախնական ուղևորությունը Ռուսաստան, որտեղ կանայք Մոսկվայում ստանում են կեղծ փաստաթղթեր և/կամ մուտքի թույլտվություններ՝ նախքան Պարսից ծոցի պետություններ տեղափոխվելը:

Դատախազները պնդում են, որ վերջին շրջանում նվազել է նման տուժածների թիվը: Դա կարող է բացատրվել Ռուսաստանում ներգաղթային հսկողության ռեժիմների խստացմամբ և անուղղակի ճանապարհով անձանց փոխադրելու/թաքցնելու և փաստաթղթեր ձևակերպելու հետ կապված ավելի մեծ ծախսերով:

ԱԱԾ-ի ներկայացուցիչները նույնպես նշեցին, որ Պարսից ծոցում մարդկանց թրաֆիքինգի “բևեռը” տեղափոխվում է դեպի Քաթար և Քուվեյթ, քանի որ ՄԱԷ-ն արդեն շատերին է հայտնի որպես նպատակակետ երկիր:

<u>Ուղի 2</u>

Թրաֆիքինգի ենթարկվող կանայք ուղևորվում են Թուրքիա՝ հատելով Հայաստան-Վրաստան և Վրաստան-Թուրքիա ցամաքային սահմանները: Կարծիք կա, որ նրանց մեծ մասը թրաֆիքինգի է ենթարկվում դեպի Արևելյան Թուրքիա: Հայտնի է, որ նրանցից ոմանք պարբերաբար այցելում են Թուրքիա-Վրաստան սահմանը՝ մուտքի թույլտվության ժամկետը երկարաձգելու նպատակով: Հայտնաբերման, հետաքննության և հետևողական աշխատանքի ողջ գործընթացը բարդանում է այն պատճառով, որ Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական կապեր չկան: Դժվար է արժանահավատ տվյալներ ունենալ, թե քանի կին է Թուրքիայում ենթարկվում թրաֆիքինգի, թեև կարծիք կա, որ այդ թիվը զգալի է:

Սահմանապահները հայտնում են, որ մի քանի դեպքեր հայտնաբերվել են, և նշում որոշ, բավական կասկածելի դեպքեր: Այդուհանդերձ, փաստաթղթերը սովորաբար խնդիրներ չեն հարուցում, և առանց լուրջ և հիմնավոր կասկածի սահմանապահները չեն կարող արգելանքի վերցնել թրաֆիքինգի ենթադրյալ զոհերին:

Տուժածները, որպես կանոն, ճանապարհորդում են ավտոբուսով՝ միայնակ կամ փոքր խմբերով: Բագրատաշենում, ինչպես և Զվարթնոցում, սահմանապահները տիրապետում են նույնացման մեթոդներին. նրանք հատկապես նշում են, որ ճանապարհորդող կանայք լի են խանդավառությամբ, հուզված են կամ դյուրահավատ: Իրավապահ մարմինների միջամտության հնարավորությունները սահմանափակ են, եթե փաստաթղթերը կարգին են: Բագրատաշենում սահմանապահները նշեցին, որ Թուրքիա ճանապարհորդողների մեծ մասը զբաղվում է առևտրով, և սահմանում նրանց դեմքերը ճանաչում են: Արդյունքում, անծանոթ դեմքերն ավելի հեշտ է լինում տարբերակել, և թրաֆիքինգից տուժած անձանց մի մասին հեշտորեն հնարավոր է նկատել:

Թեև տարածվում են տեղեկություններ այն անձանց մասին, ովքեր հայտնի են որպես թրաֆիքինգի կազմակերպիչներ, և տրամադրվում են նրանց ձերբակալման օրդերներ, տուժածների մեծ մասն ի վիճակի է հետամուտ լինել Հայաստանից դուրս ավելի լավ կյանք և ապրուստի հնարավորություններ գտնելու իրենց երազանքին՝ Հայաստան-Վրաստան սահմանի հատման կետում զերծ մնալով ձգձգումներից և խոչընդոտներից:

Ուղի 3

Աշխատանքային շահագործման նպատակով տղամարդկանց թրաֆիքինգը Ռուսաստան լուրջ խնդիր է այն շրջաններում, որտեղ սոցիալապես խոցելի խմբերն ապրում են ծայրահեղ պայմաններում: Լոռու մարզից թրաֆիքինգի ենթարկվում են և՝ տղամարդիկ, և՝ կանայք: Մինչ կանայք տեղափոխվում են վերը նկարագրված ուղիներով, թրաֆիքինգի ենթարկվող տղամարդիկ Ռուսաստան են մեկնում օրինական փաստաթղթերով, սակայն նրանց մնալն այնտեղ համարվում է անօրինական, եթե գործատուներն օտարերկրացի աշխատողների վարձելու համար անհրաժեշտ թույլտվություններ չեն ստանում:

Աշխատանքային թրաֆիքինգի մասին տեղեկությունները հիմնականում ստացվում են տեղական ՀԿ-ներին այդ մասին պատմող տղամարդկանցից: Տղամարդկանցից քչերն են ներկայանում որպես տուժածներ՝ վախենալով իրենց ընտանիքի նկատմամբ հնարավոր վրեժխնդրությունից, կամ ամաչելով իրենց հետ տեղի ունեցածից: ՀԿ-ները հայտնում են, որ նույնիսկ տուժածների կանայք տեղյակ չեն, թե ինչ է տեղի ունեցել իրենց ամուսինների հետ:

գ) Վիճակագրական տվյալներ

Հայաստանում թրաֆիքինգի հիմնախնդրի ծավալները հնարավոր չէ ստույգ որոշել:

- Ոստիկանության թրաֆիքինգի դեմ պայքարի ստորաբաժանումը Երևանում տարեկան արձանագրում է 12-15 դեպք:
- Երևանում ծառայություններ մատուցող ՀԿ-ները տարբեր թվեր են նշում՝ 8-11 դեպք 2007թ. առաջին ինն ամիսներին՝ հիմք ընդունելով ապաստանում գտնվող տուժած անձանց թիվը (2003-2006 թվականների ընթացքում՝ 76 կին և 10 տղամարդ):
- Վանաձորում գործող ՀԿ-ներից մեկը հայտնում է, որ Լոռու մարզից թրաֆիքինգի ենթարկվածների կեսը կանայք են, կեսը՝ տղամարդիկ:
- Լրագրողները հայտնում են, որ Պարսից ծոցի երկրներում սեռական շահագործման ենթարկվելու նպատակով Հայաստանից թրաֆիքինգի են ենթարկվել հազարավոր կանայք:
- ՀՀ գլխավոր դատախազությունը հայտնում է, որ հետաքննության և նախաքննության մարմինները քննել են 137 քրեական գործ (2003թ. օգոստոս - 2007թ. հունվար ժամանակահատվածում):

Նշված վիճակագրական տվյալների հիման վրա հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել Հայաստանից մարդկանց թրաֆիքինգի ծավալների, կամ լիարժեք պատկերացում՝ թրաֆիքինգի միտումների մասին: Իրավապահ մարմինների որոշ աշխատողներ նշում են, որ թրաֆիքինգի ծավալն ավելանում է, սակայն կան այնպիսիք, ովքեր ընդհանրապես ժխտում են նման խնդրի գոյությունը: Միաժամանակ, ԱՄՆ պետական դեպարտամենտի կողմից հրապարակվող "Մարդկանց թրաֆիքինգի մասին 2007թ. զեկույցի"[9] ցուցակում Հայաստանը շարունակում է տեղ զբաղեցնել 2-րդ խմբի "հատուկ վերահսկվող" երկրների շարքում:

Ակնհայտ է, որ տվյալների հավաքումը կապված է խնդիրների, ներքին հակասությունների և տեղեկատվության մասնատվածության հետ: Տարբեր նպատակների համար տվյալները հավաքվում են տարբեր չափանիշներով. համակարգված կամ ընդհանուր փոխանակում կամ վերլուծություն չի իրականացվում:

[9] 2007թ. զեկույցը, որը հրապարակվել է հունիսին, պարունակում է տվյալներ նախորդ տարվա մասին:

Կասկած է առաջանում, որ թրաֆիքինգի ենթարկվող մարդկանց թիվը շատ ավելի մեծ է պաշտոնական վիճակագրության համեմատ: Դա միանգամայն հնարավոր է, քանի որ հարցազրույցների մասնակիցներից շատերը նշեցին, որ սեռական շահագործման ենթարկված կանայք և աշխատանքային շահագործման ենթարկված տղամարդիկ հազիվ թե ցանկանան պատմել իրենց հետ տեղի ունեցածի մասին՝ վախենալով նման գործունեությանը վերագրվող խարանից, հետաքննության և քրեական հետապնդման հետ կապված անհանգստությունից և դժվարություններից, ինչպես նաև՝ իրենց և իրենց ընտանիքների նկատմամբ վրեժխնդրության հնարավոր դրսևորումներից: Ձևավորված վախի մթնոլորտը հաստատում է թրաֆիքինգի կազմակերպիչների ուժը, ազդեցությունը և լուրջ գործողություններ ձեռնարկելու կարողությունը:

Այս հանցագործության դեմ հնարավոր չի լինի բավարար չափով պայքարել այնքան ժամանակ, քանի դեռ թրաֆիքինգից տուժած անձինք իրավապահ մարմինների կողմից բնութագրվում են որպես “մարմնավաճառներ”, իսկ “կավատ” և “թրաֆիքինգի կազմակերպիչ” բառերը՝ օգտագործվում որպես հոմանիշներ:

Վերոհիշյալ միջոցները և մեթոդներն արտացոլում են մարդկանց թրաֆիքինգի դասական առանձնահատկությունները (գործողություններ՝ խաբեություն, հարկադրանք, ահաբեկում. միջոցներ՝ հավաքագրում, փոխադրում, տեղափոխում, թաքցնում և ստացում, և նպատակ՝ շահագործում շահույթ ստանալու համար) և վկայում խիստ կազմակերպված հանցավոր համակարգի գոյության մասին: Միևնույն ժամանակ հայտնաբերված ԹՏ-ների համեմատաբար փոքր թիվը ներկայացնել որպես հանցագործության ոչ շատ տարածված լինելու նշան: Կասկած չկա, որ հանցագործությանը մասնակից են մի շարք տեղացի կանայք, ովքեր, տեղաշարժվելով ՄԱԷ-ի և Հայաստանի միջև, իրականացնում են թրաֆիքինգը, և նրանցից շատերը նախկին մարմնավաճառներ կամ թրաֆիքինգից տուժած անձինք են: Նույնը կարելի է ասել Ռուսաստանում աշխատանքային շահագործման ենթարկելու նպատակով հավաքագրող տղամարդկանց մասին: Այդուհանդերձ, նույնիսկ պաշտոնապես արձանագրված ծավալների պարագայում, թրաֆիքինգը հնարավոր չէր լինի առանց ծրագրման և կազմակերպման:

2. ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ա) Գործողությունների ազգային ծրագիր

Ինչպես արդեն նշվեց, 2002 թվականին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է Միջգերատեսչական հանձնաժողով (ՄԳՀ), որը պետք է թրաֆիքինգի դեմ պայքարի քաղաքականության և միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացներ կառավարությանը: Հանձնաժողովը նախագահում է Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը: ՄԳՀ-ի կազմում են պետական մարմինների ներկայացուցիչներ: Աշխատանքներին դիտորդի կարգավիճակով մասնակցում են հասարակական կազմակերպություններ և համապատասխան միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են, օրինակ, ԵԱՀԿ-ն, ՄՄԿ-ն, ԱՄԿ-ն և ՄԱԶԾ-ն: Իր գործառույթները կատարելու և թրաֆիքինգի դեմ պայքարի աշխատանքների շարունակականությունն ու տևականությունն ապահովելու՝ հանձնաժողովի կարողության վրա էապես ազդում է այն փաստը, որ հանձնաժողովն օժտված չէ համակարգելու կամ որոշումներ կայացնելու լիազորություններով: Հանձնաժողովը չունի առանձին բյուջե կամ օժանդակ աշխատողներ:

2004 թվականին հանձնաժողովը մշակել է Թրաֆիքինգի դեմ պայքարի 2004-2006թթ. գործողությունների ազգային ծրագիր: Ծրագրով նախատեսված էին մի շարք միջոցառումներ, ներառյալ՝ իրազեկության բարձրացում, իրավապահ մարմինների աշխատողների մասնագիտական վերապատրաստում, ինչպես նաև տուժածների աջակցության և պաշտպանության մեխանիզմներ: Գործողությունների ծրագրով նախատեսված մի շարք միջոցառումներ արդեն իրականացվել են, հատկապես համապատասխան միջազգային փաստաթղթերի վավերացման, Հայաստանի իրավական դաշտի բարեփոխման, իրազեկության բարձրացման, տուժածների աջակցության և պաշտպանության առումներով: Լիարժեք իրականացմանը խոչընդոտել են մի շարք գործոններ, այդ թվում.

i) Պետական ֆինանսավորման բացակայությունը, որի պատճառով գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը կախվածության մեջ է հայտնվել ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակությունից, որի հետևանքով միջոցառումների ընտրությունը պայմանավորվել է դոնորների առաջարկներով,
ii) Հանձնաժողովի որոշումների ոչ պարտադիր բնույթը,
iii) Թրաֆիքինգից տուժած անձանց համար ուղղորդման ազգային մեխանիզմի և տուժածների ժամանակավոր ապաստաններին պետական օժանդակության բացակայությունը,
iv) Կուտակված տվյալների և թրաֆիքինգի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա թրաֆիքինգի դեմ պայքարի համապարփակ ռազմավարության բացակայությունը, ինչպես նաև՝ հավակնոտ ԳԱԾ-ն իրագործելու նպատակով համակարգման և օժանդակության ներպետական մեխանիզմների բացակայությունը,
v) Թրաֆիքինգի դեմ պայքարի կառուցակարգային դաշտի համար միասնական պլանավորվան շրջափուլի բացակայությունը,
vi) Ծրագրերի, քաղաքականության և ֆինանսավորման միջև փոխադարձ կապերի և համապատասխանության բացակայությունը, որը խոչընդոտում է միջոցառումների գերակայությունները սահմանելուն և իրագործելուն,
vii) Ղեկավարման, արդյունավետ հաղորդակցության, մոնիտորինգի և գնահատման բացակայությունը:

Հաշվի առնելով Գործողությունների ազգային ծրագրի իրագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները, ինչպես նաև ԱՄՔՈՐ-ի հետ համագործակցությամբ կլոր սեղանի շուրջ անցկացված

քննարկումների արդյունքները, ՄԳՀ-ն մշակել է Թրաֆիքինգի դեմ պայքարի 2007-2009թթ. գործողությունների նոր ազգային ծրագրի նախագիծը, որն այս զեկույցի պատրաստման ընթացքում ներկայացված էր կառավարության քննարկմանը, և որը նպատակ է հետապնդում ապահովել թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքար ութ ոլորտներում.

ա) Թրաֆիքինգի քրեական հետապնդում / Օրենսդրական դաշտի կատարելագործում,
բ) Թրաֆիքինգի կանխարգելում,
գ) Թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանություն և աջակցություն,
դ) Համագործակցություն,
ե) Ուսումնասիրություններ և հետազոտություններ,
զ) Կառավարում և համակարգում,
է) Մոնիտորինգ և գնահատում,
ը) Ֆինանսավորում և միջոցների համախմբում:

բ) Օրենսդրական դաշտ

<u>Միջազգային փաստաթղթեր</u>

2003 թ. մարտի 25-ին Հայաստանը վավերացրել է Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, այն լրացնող արձանագրությունը Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխելու, հետապնդելու և պատժելու մասին (Պալերմոյի արձանագրություն), ինչպես նաև՝ Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական փոխադրման դեմ պայքարի մասին արձանագրությունը:

<u>Պալերմոյի արձանագրություն. հիմնական առանձնահատկությունները.</u>

- Սահմանում է, որ թրաֆիքինգը հանցագործություն է ընդդեմ մարդկության, որին բնորոշ է **խաբելու և շահագործելու մտադրությունը,**[10]
- Ընդլայնում է այն **գործողությունների** շարքը, որոնք համարվում են թրաֆիքինգի գործընթացի բաղադրիչներ, այդ թվում՝ մարդկանց **հավաքագրելը, փոխադրելը, տեղափոխելը, թաքցնելը և ստանալը** վերջնական կետերում,
- Անդրադառնում է օգտագործվող տարաբնույթ **միջոցներին**՝ բիրտ ուժից մինչև մեղմորեն համոզելը՝ "համաձայնություն" կորզելու նպատակով օգտվելով անձի խոցելի վիճակից,
- Նախատեսում է, որ **շահագործման մտադրությանը շահագործվողի համաձայնությունը որևէ նշանակություն չունի**, եթե կիրառվել են սահմանման մեջ նշված միջոցները,
- Նախատեսում է, որ **տղամարդիկ** նույնպես կարող են թրաֆիքինգի ենթարկվել, թեև շեշտադրումը հիմնականում **կանանց և երեխաների** թրաֆիքինգի վրա է (*հոդված 2),*
- Նշում է թրաֆիքինգի **տարբեր հնարավոր նպատակները**՝ ի լրումն սեռական շահագործման,
- Նախատեսում է **իրավունքների վրա հիմնված**, ինչպես նաև պաշտպանության սոցիալական, տնտեսական, քաղաքական և իրավական **միջոցներ, որոնց նպատակն է՝ կանխել թրաֆիքինգը, պաշտպանել, աջակցել, վերադարձնել և վերաինտեգրել** թրաֆիքինգի ենթարկված անձանց, ինչպես նաև **քրեական օրենքով պատժելի դարձնել թրաֆիքինգը** և հարակից գործողությունները *(հոդվածներ 6, 7, 8 և 9),*

[10] Տես Միջազգային քրեական դատարանի (International Criminal Court) Հռոմի կանոնադրություն, Գլուխ 7՝ Հանցագործություններ մարդկության դեմ:

 Կոչ է անում թրաֆիքինգի կանխարգելման և պայքարի ոլորտում ծավալել **միջազգային համագործակցություն** *(Հոդվածներ 9, 10 և 11):*

Մարդու իրավունքների վերաբերյալ դրույթներն Արձանագրության մեջ կարող են, իհարկե ընդլայնվել, հարստացվել և պարտադիր դառնալել պետությունների համար, սակայն Արձանագրությունն արդեն իսկ կարևոր քայլ է թրաֆիքինգի նկատմամբ մոտեցումը մարդու իրավունքների հիման վրա կառուցելու ուղղությամբ[11]:

Հայաստանը նաև ստորագրել է, սակայն դեռ չի վավերացրել Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: Հայաստանը միացել է մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի և եվրոպական տարբեր փաստաթղթերի, ներառյալ.

- Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (**CEDAW**),
- Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրություն,
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, և
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին:

Մարդկանց թրաֆիքինգի պարագայում խախտվող իրավունքների և համապատասխան իրավական փաստաթղթերի վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տես 3-րդ հավելվածի աղյուսակը:

<u>Ներպետական օրենսդրություն</u>

<u>Ընդհանուր տեղեկություններ</u>

Մարդկանց թրաֆիքինգը որպես առանձին հանցագործություն Հայաստանում առաջին անգամ սահմանվել է 2003 թվականին, երբ ուժի մեջ է մտել նոր Քրեական օրենսգիրքը: Վերջին հինգ տարիներին իրականացվել է ներպետական օրենսդրության համապատասխանեցում միջազգային չափանիշներին: 2006 թվականին փոփոխություններ են կատարվել Քրեական օրենսգրքի և Քրեական դատավարության օրենսգրքի՝ համապատասխանաբար թրաֆիքինգի և քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության վերաբերյալ դրույթներում: Ներկայումս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը քննարկում է 2007թ. մարտին առաջին ընթերցում անցած վկաների պաշտպանության և թրաֆիքինգի կանխարգելման մասին օրենքներն ընդունելու անհրաժեշտության հարցը:

Թեև դեռ հավուր պատշաճի կարգավորված չեն որոշակի խնդիրներ, հատկապես տուժածների և վկաների պաշտպանության առնչությամբ, Հայաստանի իրավական դաշտը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ընդհանուր առմամբ համապատասխանում է միջազգային չափանիշներին: Հիմնական պրոբլեմները կապված են դանդաղ իրագործման, ինչպես նաև օրենքների կատարումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի բացակայության հետ:

[11] UNIFEM Asia, “Trafficking in Persons: A gender and rights perspective,” Briefing Kit (“Մարդկանց թրաֆիքինգը՝ գենդերային և իրավունքների տեսանկյունից”. համառոտագրությունների ժողովածու. UNIFEM-ի ասիական գրասենյակ):

Քրեական օրենսդրություն

2006 թվականին ՀՀ քրեական օրենսգիրքը փոփոխվել է՝ համապատասխանեցվելով միջազգային չափանիշներին, ներառյալ՝ Պալերմոյի արձանագրությամբ նախատեսված նորմերին: Թրաֆիքինգն այլևս չի կարող պատժվել միայն տուգանքով. մարդկանց թրաֆիքինգի ենթարկելու համար դատապարտվող անձանց նկատմամբ կիրառվող պատիժը կազմում է 3-15 տարվա ազատազրկում: Աշխատանքային թրաֆիքինգը պատժվում է որպես հանցագործություն: Միաժամանակ, հստակեցվել են երեխաների թրաֆիքինգի վերաբերյալ դրույթները:

2003 թվականին ընդունվել են մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին առնչվող նոր հոդվածներ, ներառյալ՝ մարդուն առևանգելը (հոդված 131), ազատությունից ապօրինի զրկելը (հոդված 133), երեխայի առուվաճառքը (հոդված 168), շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելու մեջ ներգրավելը (հոդված 261) և պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (հոդված 262):

Մարմնավաճառությունը վարչական իրավախախտում է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 179.1 հոդվածով և պատժվում է 500-1,000 դրամ տուգանքով (1,5-ից 3 ԱՄՆ դոլար), իսկ առաջին խախտումից հետո մեկ տարվա ընթացքում երկրորդ խախտման դեպքում՝ 1,000-2,000 դրամ տուգանքով (3-ից 6 ԱՄՆ դոլար):

Մարմնավաճառի ծառայություններից օգտվելը Հայաստանում պատժելի իրավախախտում չէ:

Հայաստանի օրենսդրությամբ ուղղակիորեն չի նախատեսվում հանցագործությունից ստացված միջոցների բռնագրավումը որպես պատժատեսակ: Չնայած 2006թ. հուլիսից թրաֆիքինգի համար նախատեսված պատիժների խստացմանը (այդ ժամանակ թրաֆիքինգը սկսեց համարվել ծանր հանցագործություն), հարցվողները փորձագետների խմբին հայտնեցին, որ բռնագրավումը որպես լրացուցիչ պատիժ որևէ գործով չի կիրառվել:

Տուժածների/վկաների պաշտպանություն

Տուժածների աջակցության և պաշտպանության ոլորտը, թերևս, այն ոլորտներից է, որոնցում Հայաստանի օրենսդրությունն առավել քիչ է հարմարեցված թրաֆիքինգի իրողություններին: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ներառում է դրույթներ վկաների պաշտպանության մասին (հոդվածներ 98-99[1]): Դրանք երաշխավորում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց անվտանգությունը: Սահմանումը ներառում է ոչ միայն վկաների, այլև տուժողների, փորձագետների, ներգրավված այլ անձանց և արդարադատության ոլորտի պաշտոնյաների պաշտպանությունը: Պաշտպանության միջոցները չեն սահմանափակվում կազմակերպված կամ այլ ծանր հանցագործություններով և կարող են կիրառվել ցանկացած հանցագործության դեպքում: Պաշտպանության միջոցներ կարող են ձեռնարկվել քրեական վարույթն իրականացնող մարմնի (ոստիկանություն, ԱԱԾ, դատախազություն) կողմից վարույթի ցանկացած փուլում՝ քրեական հետապնդում հարուցելուց մինչև դատական քննության ավարտը: Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու հիմնական նախապայմանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց կյանքին, առողջությանը, գույքին, իրավունքներին և օրինական շահերին սպառնացող վտանգի առկայությունն է: Վկայի գրավոր պահանջի դեպքում պաշտպանությունը կարող է իրականացվել նաև այլ անձանց նկատմամբ:

Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվում են մեծ թվով պաշտպանության միջոցներ, այդ թվում.

- Վկայի անձնական տվյալների պաշտպանություն,
- Հսկողության տեխնիկական միջոցների կիրառություն,
- Դատարանում ցուցմունք տալու ընթացքում ֆիզիկական պաշտպանություն,
- Ժամանակավոր վերաբնակեցում,
- Անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոփոխություն,
- Աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոփոխություն,
- Մեղադրյալի կամ այլ անձանց հեռացում դատական նիստերի դահլիճից,
- Դռնփակ նիստեր և վկայի ցուցմունքի ստացման համար հեռահաղորդակցության ժամանակակից միջոցների, օրինակ՝ հեռուստակամուրջի օգտագործում:

Հարցազրույցներից պարզ դարձավ, որ կիրարկումը բավարար մակարդակի չի հասել: Հիմնական պրոբլեմներն են՝ վերոհիշյալ միջոցներից յուրաքանչյուրի կիրառման չափորոշիչների բացակայությունը, իրավապահ և քրեական հետապնդում իրականացնող մարմինների լիազորությունների միջև առկա հակասությունները, ինչպես նաև՝ գաղտնիության պաշտպանության երաշխիքների լիակատար բացակայությունը:

2005-2006 թվականներին ՀՀ Ազգային ժողովի պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովը ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ նախաձեռնել է քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության մասին նոր օրենքի նախագծի մշակումը: Օրենքի նախագիծը միջազգային փորձաքննության է ենթարկվել UNODC-ի իրավախորհրդատվական ծառայության կողմից (Վիեննա): Օրենքի նախագծով բարելավվում են քրեական դատավարության օրենսդրության որոշ դրույթները, սակայն այն դեռևս ամբողջությամբ չի կանոնակարգում ոլորտը և լրամշակման կարիք ունի:

Տուժածների աջակցության մեծ մասը ցուցաբերում են ՀԿ-ները: Նրանք իրականացնում են վերականգնողական խորհրդատվություն և ապաստան տրամադրում: Սահմանապահները կարող են Վրաստանի հետ սահմանի հատման կետում առանձին սենյակ տրամադրել, որտեղ տուժածները կարող են սպասել մինչև հետագա ընթացակարգերի վերաբերյալ որոշումներ կայացնելը: Կառավարությունը որևէ ֆինանսական կամ նյութական աջակցություն չի ցուցաբերում թրաֆիքինգի դեմ պայքարով զբաղվող ՀԿ-ներին: Հայաստանի իշխանությունները հաճախ նշում են, որ բավարար չափով հնարավորություն չունեն ծանոթանալու այլ պետությունների փորձին, և որ համապատասխան օրենսդրության կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ ստորաբաժանում:

<u>Աշխատանքային օրենսդրություն</u>

ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը, որը գործում է “Աշխատանքի պետական տեսչության մասին” համապատասխան օրենքի հիման վրա, հսկում և վերահսկում է աշխատանքային օրենսդրության պահանջների և նորմերի կատարումը: Անօրինական աշխատանքի սահմանումը տրված է Աշխատանքային օրենսգրքում:

Հայաստանը 2004թ. վավերացրել է երկու կոնվենցիաներ՝ Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիան և Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիան: Նույն տարվա ընթացքում ՀՀ Սահմանադրական դատարանը երկու որոշում է կայացրել նշված կոնվենցիաներից բխող ՀՀ պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ:

Հայաստանի ներպետական օրենսդրությամբ հետևյալ կերպ է կարգավորվում հարկադիր աշխատանքի արգելքը.

- Հարկադիր աշխատանքի ինստիտուտն արտացոլված է Քրեական օրենսգրքի՝ թրաֆիքինգի վերաբերյալ հոդվածներում, և
- Աշխատանքային օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկը, որն ամրագրված է Աշխատանքային օրենսգրքով, ցանկացած տեսակի հարկադիր աշխատանքի, ինչպես նաև աշխատողների դեմ բռնության արգելքն է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով արգելվում է ցանկացած անօրինական աշխատանք, այսինքն՝ ցանկացած աշխատանք, որը կատարվում է առանց աշխատանքային պայմանագրի, կամ որը կատարվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությունը խախտող աշխատանքային պայմանագրի հիման վրա:

Զբաղվածության մասնավոր գործակալությունների աշխատանքը ներպետական օրենսդրության մեջ կարգավորվում է “Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” 2005թ. օրենքով և ““Զբաղվածության պետական ծառայություն” գործակալություն ստեղծելու մասին” ՀՀ կառավարության 1997թ. սեպտեմբերի 15-ի թիվ 375 որոշմամբ: Նման գործակալությունների լիցենզավորման պահանջ սահմանված չէ:

Երբ հայտնաբերվում է աշխատանքային օրենսդրության խախտում, տեսուչը լիազորված է լուծել խնդիրը և վարչական տույժ նշանակել: Աշխատանքի գլխավոր տեսուչը տեղեկացվում է հանցավոր գործունեության փաստերին: Վերջինս, իր հերթին, պարտավոր է նման փաստերի մասին հայտնել դատախազությանը:

գ) Իրավապահ մարմինների կողմից ձեռնարկվող գործողությունները

Թրաֆիքինգի (մարդկանց թրաֆիքինգի և թմրանյութերի ապօրինի շրջանառության) դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանում է ստեղծվել (վեց հաստիքով) Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության կառուցվածքում: Այս ստորաբաժանումը համակարգում է “տարածքային ստորաբաժանումների” աշխատանքը, որոնք հիմնականում զբաղվում են թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի խնդիրներով: Մարդկանց թրաֆիքինգի գծով մասնագիտական վերապատրաստում անցած, համապատասխան գիտելիքների և փորձի տիրապետող ոստիկանական այլ մարմին գոյություն չունի: Նշված ստորաբաժանումը փորձագիտական խմբին տեղեկացրեց, որ հայտնաբերվող գործերի մեծ մասը քննում է հենց այդ ստորաբաժանումը: Վերջինս կայացած աշխատանքային հարաբերություններ և հաղորդակցման ուղիներ է ստեղծել ԱԱԾ-ի և ՀՀ գլխավոր դատախազության հետ, որոնք ներկայում միակ իրավապահ մարմիններն են, որ կարող են որոշակի մասնակցություն ունենալ մարդկանց թրաֆիքինգի դեպքերի նախնական նույնացման և հայտնաբերման գործում:

Աշխատանքային լավ հարաբերություններ կան ՀԿ-ների հետ, որոնք էլ հիմնականում կազմակերպել են մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ դասընթացները ոստիկանության համար:

Վերապատրաստման տարածաշրջանային ծրագրի շրջանակներում “Հույս և օգնություն” ՀԿ-ն և ՄՄԿ-ն, ԱԱԾ-ի հետ մեկտեղ, սկսել են մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ նախնական և առավել խորացված վերապատրաստումներ իրականացնել ԱԱԾ կազմում գտնվող սահմանապահ ծառայության համար:

Կանխարգելում

Թրաֆիքինգի կազմակերպիչների և շահագործողների դեմ իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքը նպաստում է կանխարգելմանը՝ խոչընդոտելով ցանցի և կազմակերպված հանցավոր կառույցների գործունեությունը և կանխելով այլ անձանց մուտքը մարդկանց առևտրի ոլորտ:

Կանխարգելումը, որպես կանոն, բնորոշվում է որպես եռաշերտ գործընթաց.

i) Առաջին. **“Կանխել երևույթները՝ նախքան դրանց առաջացումը”** - պայքար սեռական ծառայությունների ոլորտում կանանց, իսկ աշխատանքային շահագործման ոլորտում՝ տղամարդկանց առաջարկի և պահանջարկի դեմ, տեղեկություններ տրամադրելով այդ ծառայությունները գնողներին և տուժածներին, իրականացնելով տնտեսական այնպիսի քաղաքականություն, որը զբաղվածության ավելի մեծ հնարավորություններ կընձեռի աղջիկներին, կանանց և տղամարդկանց,
ii) Երկրորդ. **“Աշխատանք դեպքերի թիվը սահմանափակելու ուղղությամբ”** - միջամտության ծրագրերի իրականացում բարձր ռիսկային խմբերի շրջանում, ինչպիսիք են, օրինակ, գյուղական բնակավայրերում ռիսկի ենթակա երիտասարդ, արտերկիր ուղևորվող կամ կրթություն չունեցող կանայք: Այցելություններ բարձր ռիսկային տնային տնտեսություններ, իրավապահ մարմինների աշխատանքի ակտիվացում՝ շահագործողների գործը բարդացնելու համար: Աշխատանք այս ոլորտում որոշակի դերակատարություն ունեցող ձեռնարկությունների հետ, ինչպիսիք են, օրինակ, ճամփորդական գործակալությունները, աշխատանքի տեղավորման գործակալությունները, ծանոթությունների բյուրոները և ավիաընկերությունները, մուտքի թույլտվություններով զբաղվող հյուպատոսական ծառայությունները: Հանցագործների համար ավելի խիստ պատիժների սահմանում:
iii) Երրորդ. **“Դեպքերի ծավալների և վնասակար հետևանքների սահմանափակում”** - իրավապահ մարմինների աշխատանքի ակտիվացում, տուժածների վերականգնում և նույն անձանց՝ կրկին թրաֆիքինգի ենթարկվելու և կրկին տուժածի կարգավիճակում հայտնվելու դեպքերի կանխում:

Դեռևս չի կիրառվում այն մոտեցումը, որ հայտնաբերվող դեպքերի ինտենսիվ քննությունը նպաստում է կանխարգելմանը: Կազմակերպված հանցավորության հետ կապերը քննության առարկա չեն դառնում: Իրազեկության բարձրացման ոլորտում կանխարգելիչ աշխատանքներն իրականացվել են հիմնականում տարբեր ՀԿ-ների կողմից, որոնց պատրաստած նյութերն օգտագործման համար տրամադրվել են իրավապահ մարմիններին, ինչպես նաև տարածվել են բնակչության շրջանում: Նման գործունեությունը կախված է դոնորների ֆինանսավորումից և, ըստ էության, չի կարող համարվել կանխարգելման հաջողության տևական երաշխիք:

Համայնքային մակարդակով կանխարգելումը պատշաճ կերպով իրականացվում է ՀԿ-ների կողմից, սակայն իրավապահ մարմինները կարող են կանխարգելման և քննության բազմաթիվ ծրագրեր իրականացնել՝ համագործակցելով ցամաքային փոխադրող ընկերությունների, ավիաընկերությունների, հյուրանոցների, ճամփորդական գործակալությունների, հարկային մարմինների և համայնքային իշխանությունների հետ: Ներկայումս հայտնի չեն կանխարգելման ընթացիկ աշխատանքներին եկեղեցիների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ

երիտասարդական կազմակերպությունների մասնակցության դեպքեր, թեև դա կարող էր հող հարթել իրավապահ մարմինների հետ գործընկերության համար:

Պաշտպանություն

Նույնացման գործընթացում, ըստ երևույթին, նպատակները և գործողությունները բավականաչափ միասնական և հետևողական չեն. ստուգողական հարցազրույցները, նույնացման հարցաշարերը/հարցազրույցները և ռիսկի գնահատման բանաձևերը հստակորեն չեն տարբերակվում: Տարբեր են ոստիկանության և ՀԿ-ների կարիքները, ինչպես նաև որոշակի ծառայություններ մատուցելու՝ նրանց կարողությունները:

Տպավորություն է ստեղծվում, թե անհամեմատ մեծ ուշադրություն է դարձվում աջակցությանը՝ միաժամանակ չափազանց քիչ ուշադրություն դարձնելով թե՛ ակտիվ կանխարգելմանը, թե՛ քննությանը և քրեական հետապնդմանը:

Տեղական և միջազգային ՀԿ-ները և ՄՄԿ-ն, տարբեր դոնորների ֆինանսավորմամբ գործում են իրազեկման, վերապատրաստման, տուժածների աջակցության/վերականգնման և տեղեկացման ոլորտներում, որի շնորհիվ իրավապահ մարմինները, տեղյակ լինելով նրանց առկայության և մատուցած ծառայությունների մասին, կատարում են տուժածների ուղղորդում: Այդուհանդերձ, թրաֆիքինգի ենթարկված անձանց նույնացման համար մշակված ռազմավարությունները թերի են: ԹՏ-ներից քչերն են ներկայանում որպես տուժածներ կամ նույնացվում իրավապահ մարմինների կողմից՝ իրականացվող քննությունների արդյունքում:

Առաքելության հիմնական բացահայտումներից էր այն, որ ակտիվ հետաքննությունը համարժեքորեն չի իրականացվում, և իրավապահ մարմինները բավարար չափով ծանոթ չեն քննության ժամանակակից մեթոդներին, որոնք կնպաստեին մարդկանց թրաֆիքինգ հանցագործության համար մեղավորների քրեական հետապնդմանը և դատապարտմանը: Քանի որ տուժածներին աջակցություն ցուցաբերելու հարցին զգալի ուշադրություն է դարձվում, ձևավորվել է թյուր համոզվածություն առ այն, որ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը ոչ միայն կատարելագործվել է, այլև հասցվել ավարտին:

Միաժամանակ, չնայած աջակցության ուղղությամբ աշխատանքների կարևորությանը, որոշակի շփոթություն կա պաշտպանության ոլորտում իրավապահ մարմինների պարտականությունների առումով: Օպերատիվ տվյալներ բացահայտելու և իրացնելու՝ ոստիկանության կարիքներն ամբողջ աշխարհում բախվում են տուժածների իրավունքները և բարեկեցությունը պաշտպանելու անհրաժեշտությանը: Ուստի, շատ կարևոր է հստակորեն և հետևողականորեն տարանջատել լիազորություններն ու պարտականությունները: Ընթացակարգերի նպատակների և իրականացման, գաղտնիության և վկաներից ստացվող ապացույցների հետ կապված խնդիրների տարբերակումը պետք է հստակեցնել և հայտնի դարձնել բոլոր շահագրգիռ կողմերին:

դ) Դատախազության կողմից ձեռնարկվող գործողությունները

Գլխավոր դատախազության կառուցվածքում ստեղծվել է Անօրինական միգրացիայի և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասնագիտացված բաժին, որը թրաֆիքինգի գործեր քննելու հարցում օժտված է զգալի ինքնավարությամբ: 2008 թվականին, “Դատախազության մասին” օրենքի փոփոխությունների արդյունքում քննության գործառույթը կփոխանցվի ոստիկանությանը:

Հաշվի առնելով ԹՏ-ների բացահայտման դժվարությունները, ԹՏ-ների՝ ինքնաբացահայտման հակված չլինելը և/կամ թրաֆիքինգի գործերով անցնող տուժածների՝ ցուցմունք տալուց ձեռնպահ մնալը, մեղավորների քրեական հետապնդման և դատապարտման գործում ի հայտ են գալիս էական խոչընդոտներ:

Դեպքերի մեծ մասում մեղադրանք կարող է ներկայացվել միայն տուժածի բողոքի հիման վրա: Մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչներին պատժելու համար տուժածի բողոքը հիմք ընդունելը բավարար չէ: Հազվադեպ է պատահում, որ քրեական գործի քննությամբ միայն բացահայտվեն հանցագործության փաստը հաստատող ապացույցներ:

Թրաֆիքինգի դատապարտման վերաբերյալ դատախազությունից ստացված տվյալները (2003թ. օգոստոսից մինչև 2007թ. հունվար քննություն իրականացնող մարմինները քննել են 137 գործ) վկայում են, որ թրաֆիքինգի համար դատապարտված հանցագործների մեծամասնությունը կանայք են եղել: Նրանք դատապարտվել են 1.5-ից մինչև 5 տարի ժամկետներով ազատազրկման, կամ պատժվել են ուղղիչ աշխատանքներով կամ տուգանքով: Իրավապահ մարմինները և դատախազության ներկայացուցիչները վստահ են, թե նրանք մարդկանց թրաֆիքինգ կազմակերպող ավելի մեծ հանցավոր կազմակերպությունների “տեղական հավաքագրողներ” չեն, և թե այս գործերով բարդ և համալիր կազմակերպվածություն առկա չէ: Փորձագետների խումբը չի տեղեկացվել կազմակերպված հանցավոր կառույցների գործունեության որևէ դեպքի մասին:

Քրեական գործի քննության շրջանակներում տուժածի՝ թրաֆիքինգի կազմակերպչի հետ առնչվելու և դատական քննությունից առաջ կամ դատարանում նրա հետ “առերեսվելու” անհրաժեշտությունը, բնականաբար, սահմանափակում է հետագայում ևս ցուցմունք տալու՝ ԹՏ-ների պատրաստակամությունը: Նման մեթոդների խրախուսումն իրավապահ մարմինների կողմից կարող է բացասական կարծիք ձևավորել նրանց մասին:

Ոմանք պնդում են, թե բազմաթիվ վկաներ, որ միաժամանակ նաև տուժածներ են, հրաժարվում են վարույթին մասնակցելուց, ցուցմունք տալուց կամ համաձայնում են նվազ ծանր մեղադրանք առաջադրելու հետ:

Հայաստանի օրենսդրությամբ չեն նախատեսվում դրույթներ, որոնցով տուժածներն ուղղակիորեն կազատվեին հարկադրանքի ներքո կատարված հանցագործությունների համար պատժից: Պրակտիկ աշխատանքում իրավապահ մարմինները գործադրում են այս հանգամանքը՝ տուժածներից ցուցմունք ստանալու նպատակով: Հայտնի են դեպքեր, երբ տուժածը մեղադրվել է պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու, ինչպես նաև փաստաթղթեր կեղծելու մեջ: Որոշ դեպքերում մեղադրանքը կարճվել է այն ժամանակ, երբ տուժածներից ստացվել են ցանկալի ցուցմունքներ:

Անհրաժեշտ է հնարավորինս պարզաբանված ուղղորդում և մոտեցումներ որդեգրել՝ հստակեցնելով սահմանումները, ներառյալ՝ շահագործման, հարկադրանքի, դիրքի և խոցելիության չարաշահման հասկացությունների սահմանումները և այլն: Քրեական օրենսգիրքը չի նախատեսում դրույթ, որը կարգելի, որպեսզի թրաֆիքինգի մեջ մեղադրվող անձն իր գործողություններն արդարացնի նրանով, որ գործել է տուժածի համաձայնությամբ: Պրակտիկ աշխատանքում տուժածի համաձայնության փաստի առկայության դեպքում իրավապահ մարմինները հակված չեն կիրառելու 132 և 132[1] հոդվածները: Նման դեպքերում նրանք նախընտրում են կիրառել 261-րդ հոդվածի 1-ին մասը՝ հիմնականում հենվելով տուժածի բնութագրի (նախկին մարմնավաճառ) վրա, քանզի 261-րդ հոդվածի 1-ին մասով

նախատեսված հանցագործության փաստն ապացուցելու համար որոշակի “միջոցների” կիրառությունն անհրաժեշտ չէ ապացուցել:

ե) Դատարանների կողմից ձեռնարկվող գործողությունները

Առաջին ատյանի բոլոր դատարանները քննում են մարդկանց թրաֆիքինգին առնչվող գործեր: Վերաքննիչ ատյանում տեղի է ունենում մասնագիտացում, քանի որ մարդկանց թրաֆիքինգի գործերը վերաքննիչ ատյանում քննվում են քրեական գործեր քննող դատավորների կողմից:

Դատավորների առջև ծառացող լրջագույն դժվարությունն այն է, որ շահագործումը տեղի է ունենում Հայաստանի սահմաններից դուրս: ՄԱԷ-ի հետ Հայաստանը կնքել է 2 միջազգային համաձայնագիր: Առաջինը վերաբերում է քրեական գործերով իրավական փոխօգնությանը, իսկ երկրորդը՝ հանձնմանը (երկուսն էլ ստորագրվել են 2002թ. ապրիլի 20-ին, վավերացվել՝ 2003թ. մարտի 25-ին): Այսուհանդերձ, նշված համաձայնագրերը պրակտիկայում, կարծես, չեն կիրառվում: Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ չկան: Ռուսաստանի տարածքում մարդկանց թրաֆիքինգի գործեր դեռ չեն քննվել. կարելի է ենթադրել, որ Ռուսաստանի հետ աշխատանքն ավելի հեշտ կլինի, թեև գործնականում նման փորձ դեռ չկա:

Դատախազներն ընդամենը մի քանի անգամ են ուղևորվել ՄԱԷ: Ստացված ապացույցները սահմանափակ են: Դատավորների համար խնդրահարույց է այն հանգամանքը, որ ապացույցները հիմնականում սահմանափակվում են միայն վկաների ցուցմունքներով:

Պատժիչ պրակտիկան. 2006թ.

Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանները քննել են մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ 29 քրեական գործ: Դատապարտվել է 39 մարդ, այդ թվում՝ 32 կին և 7 տղամարդ.

- 132 հոդվածով - 12 մարդ, 10 քրեական գործերով,
- 132' հոդվածով - 1 մարդ, 1 քրեական գործով,
- 161 հոդվածով - 3 մարդ, 2 քրեական գործով,
- 262 հոդվածով - 23 մարդ, 16 քրեական գործով:

Ազատազրկման է դատապարտվել 24 մարդ, այդ թվում՝ 19 կին և 5 տղամարդ: Ազատազրկման ժամկետները տատանվել են 1.5-ից մինչև 5 տարի:

Ազատազրկման հետ կապ չունեցող պատժատեսակ է կիրառվել 19 մարդու նկատմամբ, ներառյալ.

- Ուղղիչ աշխատանքներ - 5 մարդ (4 կին և 1 տղամարդ)
- Տուգանք - 10 մարդ (9 կին և 1 տղամարդ):

Մարդկանց թրաֆիքինգի (ՀՀ քրեական օրենսգրքի 132 և 132' հոդվածներ) մեջ մեղադրվող բոլոր անձինք դատապարտվել են ազատազրկման:

Քաղվածք թրաֆիքինգի և հարակից հանցագործությունների կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության ձեռնարկած կանխարգելիչ միջոցառումների և քրեական գործերի վերաբերյալ

զ) Գենդերային նկատառումներ

Մարդկանց թրաֆիքինգի վրա մեծապես ազդում են հասարակության պատկերացումները կանանց և տղամարդկանց դերերի և պարտականությունների վերաբերյալ, նրանց վարքը, արժեքային համակարգը և աշխատանքի գենդերային բաժանումը: Այրի, միայնակ, ամուսնալուծված կանայք, ընտանիքում "կերակրող" տղամարդ չունեցող, ինչպես նաև կրթություն, հմտություններ և աշխատանք գտնելու համար անհրաժեշտ այլ միջոցներ չունեցող կանայք կարող են ընտանիքի կենսապահովման սահմանափակ ընտրություններ ունենալ և խոցելի լինել թրաֆիքինգ իրագործողների համար, որոնք կարող են նրանց ներգրավել սեռական շահագործման մեջ:

Նմանապես, տղամարդկանցից ակնկալվում է որոշակի գենդերային դերակատարում, այն է՝ "ապրուստ հայթայթել" ընտանիքի համար: Տնտեսական այնպիսի պայմաններում, երբ բարձր է գործազրկությունը, նրանք, որպես կանոն, խաբվում են տղամարդկանց բնորոշ աշխատանքի առաջարկներով, հիմնականում՝ շինարարության բնագավառում:

Թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար սեռական ծառայությունների ոլորտում և/կամ ստրկության կամ հարկադիր աշխատանքի պայմաններում՝ այլ տղամարդկանց հսկողության ներքո աշխատելու ամոթը և խարանը չեն համապատասխանում վարքի սոցիալապես ընդունված նորմերին: Նրանց գործողություններն ընդունելի չեն և հակասում են "բարոյական" կանանց և "առնական" տղամարդկանց ներկայացվող ակնկալիքներին:

Հետևանքն այն է, որ այդ կանայք և տղամարդիկ Հայաստան վերադառնալուց հետո չեն բացահայտում իրենց հետ տեղի ունեցածը՝ նախընտրելով մնալ անհայտ և էապես չօգնել քրեական գործերի քննությանը:

Թեև իրավապահ համակարգում մոտեցումները փոխվում են, միևնույն կարծրատիպերի և խտրականության դրսևորում է թրաֆիքինգի ենթարկված կանանց անտարբեր կերպով "մարմնավաճառ" անվանելը, իսկ "թրաֆիքինգի կազմակերպիչ" արտահայտության փոխարեն, որպես հոմանիշ, անփութորեն "կավատ" բառը գործածելը, ինչպես նաև տղամարդկանց աշխատանքային շահագործման դեպքերի առկայությունը պաշտոնական մակարդակով ակնհայտորեն հերքելը:

Կանխակալության մասին է վկայում հաճախ արտահայտվող այն կարծիքը, թե թրաֆիքինգի ենթարկվող կանայք մինչ այդ էլ մարմնավաճառներ էին, ովքեր "վարժված էին" սեռական աշխատանքի, կամ "գիտեին, թե ինչ է իրենց սպասում", և ուստի, համաձայն էին շահագործվելուն:

Նշվել է նաև, որ քրեական գործեր քննող պաշտոնյաները տվյալներ ունեն մարմնավաճառների մասին, որը թույլ է տալիս "հետևել նրանց", և որ թրաֆիքինգի ենթարկված կանանց կարելի է նույնացնել նրանց մատնող հագուստով և ոչ պարկեշտ բառապաշարով:

Տուժածների հետ տեղի ունեցածի հետևանքների դեմ պայքարող ՀԿ-ների հետ աշխատանքի շնորհիվ այդ մոտեցումները փոխվում են: Իրավապահ մարմինների շրջանում ձևավորվում է կարեկցանք և ըմբռնում, ինչպես նաև այն փաստի գիտակցում, որ թրաֆիքինգը մարդու իրավունքների հիմնախնդիր է, որն ունի գենդերային առանձնահատկություն:

Անցկացված բոլոր հարցազրույցներին մասնակցող իրավապահ մարմինների ներկայացուցիչները բարձր պաշտոններ զբաղեցնող տղամարդիկ էին: Երկու դեպքում ներկա էին կանայք՝ հանդիպումներն արձանագրողի կարգավիճակով: Նրանցից մեկը մայորի կոչում ուներ և աշխատում էր Ոստիկանության թրաֆիքինգի դեմ պայքարի՝ 6 հաստիք ունեցող բաժնում:

Սահմանապահների 30-40 տոկոսը կանայք են: Կանայք ծառայություն են անցնում սահմանակետերում, սակայն՝ "վարչական" պաշտոններում: Եթե սահմանակետում անհրաժեշտ է իրականացնել որևէ կնոջ խուզարկություն, ապա արական սեռի պաշտոնյաները խնդրում են, որպեսզի մաքսային ծառայությունում աշխատող կանանցից որևէ մեկը կատարի խուզարկությունը: Պարզ չէ, թե ինչ է տեղի ունենում, եթե այդ պահին հերթապահող կին չկա: Կին սահմանապահների մեծ մասն աշխատում է "Զվարթնոց" օդանավակայանում:

Ոստիկանության ակադեմիա ընդունվող սաների համար նախատեսված տեղերի տարեկան ընդհանուր թվի 8-10%-ը հատկացվում է կանանց:

2006թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանի դատարաններում (առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ) աշխատող 178 դատավորներից 39-ը կանայք էին (22%):

Կին դատախազների թվի վերաբերյալ տեղեկություններ չկան:

3. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԿԱ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ընդհանուր տեղեկություններ

Մարդկանց թրաֆիքինգին հանցավոր կազմակերպությունների մասնակցությունը վերջին տարիներին ակտիվացել է՝ պայմանավորված մեծ շահույթով և համեմատաբար ցածր ռիսկերով[12]: Հանցագործությունը կարող է կատարվել մի շարք փոքր, ներքին թույլ կապեր ունեցող խմբերի կողմից, որոնք հավաքագրում և միմյանց են վաճառում տուժածներին՝ վերջիններիս ծագման երկրից տեղափոխելով մինչև ժամանման երկիր: Հանցագործությունը կարող է կատարվել նաև համալիր կառուցվածք ունեցող խոշոր հանցավոր կազմակերպությունների կողմից, որոնք վերահսկում են գործընթացի բոլոր փուլերը: Ցանկացած պարագայում, խմբերից քչերն են իրենց հանցավոր գործունեությունը սահմանափակում միայն մարդկանց թրաֆիքինգով. գրեթե բոլոր դեպքերում նրանք զբաղվում են նաև թրաֆիքինգի այլ տեսակներով կամ այլ հանցագործություններով:

Հանցագործությունը բացահայտելու և հետաքննելու դժվարությունը պայմանավորված է այն փաստով, որ մարդկանց թրաֆիքինգով զբաղվող հանցավոր կազմակերպությունների մասնակցությունը չի կարող միանգամից ակնհայտ դառնալ դրանք քննող իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կամ տուժածների հետ գործ ունեցող այլ անձանց համար: Ավելին, թրաֆիքինգի դեպքերը հաճախ չեն արձանագրվում, քանի որ տուժածները վախենում են ցուցմունք տալ, կարող են դաժան վերաբերմունքի ենթարկված լինել և խնամքի կարիք ունենալ, հաճախ թարգմանչական ծառայությունների կարիք են ունենում, իսկ երբեմն էլ որոշ իրավապահ մարմիններ կարող են նրանց վերաբերվել ինչպես հանցագործների:

Մարդկանց թրաֆիքինգի միջազգային բնույթն ավելի է դժվարացնում այս հանցագործությունը քննողների գործը: Նման գործերի մեծ մասի համար անհրաժեշտ է միջգերատեսչական մոտեցում: Նման գործեր քննելն այնքան դժվար է քննիչների, դատախազների և դատավորների համար, որ արդյունքում քննությունը հաճախ կրում է մակերեսային բնույթ՝ հանգեցնելով “ցածր օղակի” հանցագործների դատապարտման, մինչդեռ բուն հիմնադիրները և/կամ կազմակերպիչները կամ մնում են չբացահայտված կամ չեն ենթարկվում քրեական հետապնդման:

Կազմակերպիչներին բացահայտելիս և քրեական հետապնդման ենթարկելիս անհրաժեշտ է գիտակցել, որ մարդկանց թրաֆիքինգը ոչ թե մեկ հանցագործություն է, այլ միասնաբար իրականացվող անօրինական գործողությունների շարք: UNODC-ն “Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ձեռնարկում” (“Toolkit to Combat Trafficking in Persons”) թրաֆիքինգը նկարագրում է որպես քրեական գործընթաց, այլ ոչ որպես քրեական արարք: Ուստի, հանցագործության դեմ արդյունավետ պայքարը չի կարող սահմանափակվել միայն տուժածի հետ աշխատանքով: Այն պետք է ներառի քննչական մեթոդների ավելի լայն շրջանակ:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրերում հաջողության հասնելու համար ցանկացած կառավարության համար խիստ կարևոր է բոլոր մակարդակների իրավապահ մարմինների աշխատողներին ուսուցանել նշված մեթոդներին: Թեև շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, զգալի աշխատանք է կատարվել՝ բնորոշելու մարդկանց թրաֆիքինգի առկայության նշանները և հուշող

[12] Միավորված ազգերի կազմակերպության ընկերակցությունների համաշխարհային դաշնության (World Federation of United Nations Associations) “Ապագայի պատկերը” (State of the Future) հետազոտության հաշվարկային տվյալների համաձայն մարդկանց թրաֆիքինգի ծավալային արժեքը համաշխարհային մակարդակով կազմում է 44 միլիարդ ԱՄՆ դոլար:

հանգամանքները, անհրաժեշտ է լրացուցիչ ջանք գործադրել՝ ցուցմունքների վրա հիմնված քննության մոտեցումը (reactive investigation) փոխարինելու առավել նախաձեռնողական բնույթի պայքարով (proactive investigation): Սա հատկապես կարևոր է Հայաստանի պարագայում, որտեղ մոտեցումները կենտրոնանում են հիմնականում տուժածին օգնելու ուղղությամբ: Սույն փաստաթղթի հեղինակները չեն ցանկանում տպավորություն ստեղծել, թե տուժածների իրավունքները քննիչի աշխատանքում չպետք է առաջնային և կարևոր լինեն, սակայն թրաֆիքինգը կանխելու, տուժածներին պաշտպանելու և հանցագործներին քրեական հետապնդման ենթարկելու համար պարտադիր կերպով անհրաժեշտ է ուղղակի պայքար ծավալել բուն հանցավոր գործունեության դեմ:

Հայաստանում ուսուցման առկա համակարգը դեռևս չի կարող արդյունավետորեն մատուցել այն նոր մեխանիզմները և աշխատանքային ստանդարտ ընթացակարգերը, որոնք թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակներում պետք է մշակվեն և ներդրվեն իրավապահ մարմինների, դատախազների և դատավորների կողմից: Թեև ներպետական օրենսդրության մեջ զգալի փոփոխություններ են կատարվել՝ մարդկանց թրաֆիքինգը և հարակից հանցագործությունները որպես ծանր հանցագործություններ որակելու և իրավապահ մարմիններին համարժեք լիազորություններով օժտելու ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի երկրի ներսում արդյունավետորեն իրականացնել գործերի քննությունը և քրեական հետապնդումը, այնուհանդերձ, անհրաժեշտ է որոշակի աշխատանք կատարել՝ ուսուցման ժամանակակից ծրագրերի և մեթոդների միջոցով զարգացնելով “առաջին գծում” գտնվող և այլ պաշտոնյաների կարողությունները:

Ստորև ներկայացվում են Հայաստանի համար ուսուցման ծրագիր մշակելու առնչությամբ փորձագիտական խմբի բացահայտած ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները:

<u>Հայաստանի Հանրապետության ոստիկանություն</u>

ա. Ոստիկանության ակադեմիա

Ոստիկանության ակադեմիան կայացած, անկախ կառույց է, որի կազմի մեջ են մտնում խորացված ուսուցման, հեռակա ուսուցման, ներքին զորքերի և իրավաբանական ֆակուլտետները: Շուտով կստեղծվի նաև ճանապարհային ոստիկանության բաժին: Հայաստանի ոստիկանության սպայական անձնակազմի մեծ մասը, ներառյալ թրաֆիքինգի դեմ պայքարի ստորաբաժանմանը կցված ոստիկանները, ակադեմիայի շրջանավարտներ են: Ակադեմիա ընդունվողներն անցնում են ներածական երկշաբաթյա դասընթաց, որին հաջորդում է երկու տարի տևող ընդհանուր ուսուցումը, ներառյալ՝ հումանիտար առարկաներ, ոստիկանական հմտություններ և իրավունքի հիմունքներ: Այդ փուլն ավարտելուց հետո ուսանողները վերջին տարիների ընթացքում մասնագիտանում են՝ իրենց ակադեմիական տվյալների, որակավորման և հետաքրքրությունների հիման վրա ուսումնասիրելով ավելի կոնկրետ մոդուլներ:

Իրավաբանական ֆակուլտետը կենտրոնանում է ոստիկանական աշխատանքի չորս ուղղությունների վրա, մասնավորապես.

i) Վարչական իրավունք.
ii) Քրեական արդարադատություն.
iii) Քննչական մեթոդներ.
iv) Օպերատիվ աշխատանք.

Ակադեմիայի ներկայացուցիչները համաձայնեցին, որ կազմակերպված հանցավորության դեմ համարժեք պայքար մղելու համար իրավաբանական ֆակուլտետի ուսումնական ծրագրերի մեծ մասին պետք է ավելացնել որոշակի տարրեր, սակայն չմասնավորեցրեցին՝ նման գործընթաց նախաձեռնվել է, թե ոչ:

Փորձագիտական խմբին տրամադրված ուսումնական ծրագիրը վերջին անգամ վերանայվել է 2000 թվականին և ներառում է հնգամյա ուսուցման ծրագիր՝ բաղկացած ընդհանուր թվով 64 մոդուլներից: Թրաֆիքինգի դեմ պայքարը ներկայումս ուսումնական ծրագրի մեջ ներառված չէ, և ուսումնական ծրագիրը վերանայվում է ոչ թե ակադեմիայի սեփական նախաձեռնությամբ, այլ ըստ ոստիկանության ղեկավարության կողմից ուղղակիորեն ակադեմիային ներկայացվող նոր թեմատիկ պահանջների: Այնուհետ, այս կամ այն առարկան ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու կամ չընդգրկելու մասին որոշում է կայացնում կառավարման խորհուրդը: Ըստ էության, ակադեմիայի բարձրաստիճան ղեկավարությունը որևէ կերպ շահագրգռված չէ ձերբազատվելու այս մոտեցումից, ի տարբերություն Դատախազական դպրոցի, որտեղ որդեգրվել է շատ ավելի նախաձեռնողական մոտեցում (տես ստորև): Ոստիկանության ակադեմիայի տնօրենն ըստ էության նշեց, որ նախընտրում է ունենալ կայուն ուսումնական ծրագիր:

Ուսուցումը կատարվում է ավանդական, պասիվ դասավանդման մոտեցմամբ և զուրկ է ժամանակակից, ինտերակտիվ մեթոդներից: Խորացված և շարունակական ուսուցումը, ըստ էության, կարգավորված չէ, այլ իրականացվում է միայն ըստ պահանջի: Ակադեմիայում աշխատող դասախոսների/հրահանգիչների ընտրության կամ վերապատրաստման պաշտոնական գործընթաց չկա. հավակնորդներն ընտրվում են աշխատանքի հայտարարությանը պատասխանելու և թափուր տեղի մասին հայտարարություն տված ֆակուլտետի դեկանի հետ հարցազրույց անցնելու միջոցով: Պատրաստականությունը որոշելու համար իրականացվում է նաև ուսանողների հոգեչափական (պսիխոմետրիկ) ստուգում:

Ակադեմիայում գործում է ուսումնական ծրագրում նոր առարկաներ ընդգրկելու սահմանված կարգ, սակայն ակադեմիայի ներկայացուցիչները նշեցին, որ մարդկանց թրաֆիքինգ առարկան ներդնելու համար իրենց ընդամենը անհրաժեշտ կլինի օրինակելի ուսումնական ծրագիր և այս թեմայով որոշ գրականություն: Մարդկանց թրաֆիքինգն ակադեմիայի ուսումնական ծրագրում ընդգրկելու միջոցով կարող է երաշխավորվել մասնակիցների ավելի լայն շրջանակ, քան թրաֆիքինգի թեմայով վերապատրաստումների ներկա մոտեցումը պահպանելու դեպքում, որը զուրկ է համակարգումից և հատվածական է: Ավելին, ակադեմիան պետական բյուջեից ստանում է առանձին հատկացում, ուստի, առարկան ներդնելուց հետո շարունակականության խնդիրը կարող է լուծված համարվել:

Ակադեմիայի դասախոսներից ոմանք փորձագիտական խմբին տեղեկացրեցին, որ կցանկանային ավելի լավ ծանոթանալ միջազգային լավագույն պրակտիկային: Եթե այդ պրակտիկան ներդրվի, օրինակ, մարդկանց թրաֆիքինգի մոդուլի միջոցով, ապա ուսումնական ծրագրում այլ առարկաների մասով նույնպես կարող են կատարվել համապատասխան փոփոխություններ՝ ակադեմիայի դասավանդման մեթոդներն ընդհանուր առմամբ արդիականացնելու և կատարելագործելու նպատակով:

Ակադեմիական ուսուցման ձևավորված պրակտիկան կարող է որոշակի դիմադրություն առաջացնել առկա ուսումնական ծրագրի մեջ նոր մոդուլներ կիրառելու և/կամ ուսուցանման նոր մեթոդներ մշակելու և ներդնելու ճանապարհին: Ինչ վերաբերում է, մասնավորապես, դասավանդման նոր մեթոդներին, ապա քննչական ուսուցման մեթոդների ներդրումը կարող է դժվարությունների հանդիպել, քանի որ հակասում է ոստիկանության և ռազմական կրթական հաստատություններից շատերի ձևավորված մշակույթին ոչ միայն Հայաստանում, այլև այլ երկրներում:

Խնդրահարույց է նաև “ուսուցանողների ուսուցման” ծրագրերի շրջանակում դրսից վերապատրաստված դասախոսների ներգրավելու հնարավորությունը: Նշվեց, որ վերապատրաստումը դիտվում է որպես մասնագիտական աճի հնարավորություն, այլ ոչ դաստիարակչական կամ օժանդակ գործառույթ, և որ ակադեմիան և նրա դասախոսները կարող են “օպերատիվ ուսուցանողներին” ընկալել որպես սպառնալիք իրենց պաշտոններին և կարիերային:

Պարզվեց, որ իրենց աշխատանքի ակադեմիական բնույթի պատճառով դասախոսները բավարար չափով չեն ընկալում մարդկանց թրաֆիքինգի քննություն անցկացնելու հետ կապված գործնական խնդիրները: Դա վերաբերում է հատկապես տուժածի իրավունքներին և որոշակի գործերում զգայուն մոտեցումներ ցուցաբերելուն: Նման հմտություններ տեսական մակարդակով դժվար է ձեռք բերել: Փորձառու քննիչների հետ պրակտիկ դասընթացներ կամ դասախոսի մասնակցություն ապահովող ինտերակտիվ ուսուցման մեթոդներ չներդնելու պարագայում ակադեմիան հազիվ թե կարողանա բավարար թվով արհեստավարժ քննիչներ պատրաստել:

բ. Ոստիկանության վերապատրաստման կենտրոն

Ոստիկանության վերապատրաստման կենտրոնը կազմակերպում է եռամսյա սկզբնական վերապատրաստում նոր ընդունվող աշխատողների համար, ովքեր կրթական հաստատությունն ավարտելուց հետո պետք է ծառայության անցնեն պահակային և պարեկային ոստիկանությունում: Կենտրոնում ուսուցանվում և պարբերաբար վերապատրաստվում են նաև ոստիկանության թաղային տեսուչները:

Հաշվի առնելով, որ կենտրոնում ուսուցանվող ոստիկանները կատարում են սովորական ոստիկանական գործառույթներ և չեն զբաղվելու գործերի քննությամբ կամ կազմակերպված հանցավորության դեմ պայքարով (բացառությամբ նրանց, ովքեր ստանում են սպայական կոչում), մարդկանց թրաֆիքինգը ներառված չէ որպես առանձին դասընթաց, սակայն ներկայացվում է մի շարք թեմաների հետ միասին՝ Քրեական օրենսգրքի այն հոդվածների կապակցությամբ, որոնք վերաբերում են մարդու դեմ ուղղված հանցագործություններին: Այսպիսով, թրաֆիքինգը ներկայացվում է ավելի շատ որպես մարդու իրավունքների խախտում, քան որպես հանցագործություն:

Վերապատրաստման կենտրոնի տնօրենը նշեց դասավանդման նոր մեթոդներ փորձարկելու պատրաստակամությունը և հաստատեց, որ կենտրոնում իրականացվում են որոշ ծրագրեր, որոնք ներառում են ուսուցանողների ուսուցում և համայնքային ոստիկանության նախաձեռնություններ:

գ. Ոստիկանության թրաֆիքինգի դեմ պայքարի ստորաբաժանում

Ինչպես նշվեց, ՀՀ ոստիկանությունում (Երևանում, Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության կազմում) ստեղծվել է թրաֆիքինգի դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանում: Վերջինիս աշխատողներն ընտրվում են ոչ թե պաշտոնական գնահատմամբ, այլ հաշվի առնելով նրանց հմտությունները և գործնական աշխատանքում դրսևորած որակները: Նրանց համար ներկայում իրականացվող պաշտոնական վերապատրաստման ծավալը չնչին է: Նոր աշխատողների համար իրականացվում են ստաժավորման վեցամսյա ծրագրեր, որոնց ընթացքում նրանք վերապատրաստվում են՝ աշխատելով ավելի փորձված պրակտիկ մասնագետների հետ: Հաշվի առնելով, որ ստաժավորումն անցյալում ևս կիրառվել է որպես վերապատրաստման մեթոդ, այս բաժնի աշխատողները, թերևս, իրենք կարող են յուրացնել նոր մեթոդները և, ի վերջո, դառնալ ուսուցանողներ: Հնարավոր է նաև նրանց ոչ

ֆորմալ ուսումնական ծրագրի մեջ ներդնել փորձառու մասնագետի հետ աշխատանքի միջոցով ստաժավորման տարրեր:

Նշվել է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործեր քննելու նպատակով միջազգային համագործակցության անհրաժեշտությունը: Համատեղ քննությունների միջոցով քննիչները կարող են անձամբ ծանոթանալ քննության այլ տեսակներին, որոնք կախված չեն միայն տուժածի ցուցմունքից:

Ոստիկանության թրաֆիքինգի դեմ պայքարի ստորաբաժանումը տեղեկացված է Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ՀԿ-ների կատարած աշխատանքին և դրական է գնահատում տուժածներին օգնելու ուղղությամբ ՀԿ-ների ջանքերը: Արդյունքում՝ ձևավորվել են աշխատանքային լավ հարաբերություններ: Ստորաբաժանումը մտադիր է պաշտոնական տեսք հաղորդել այդ հարաբերություններին՝ կնքելով Փոխըմբռնման հուշագիր, որը կմտնի Ուղղորդման ազգային մեխանիզմի կառուցվածքի մեջ:

Թրաֆիքինգի դեմ պայքարի ստորաբաժանման վարչակազմը, ունենալով ընդամենը վեց աշխատող, զբաղվում է և թմրադեղերի, և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի խնդիրներով: Եթե գործերի քննությունն իրականացվեր սեփական նախաձեռնությամբ՝ օպերատիվ տվյալների հիման վրա (intelligence led), ապա այս մոտեցումը կարող էր արդյունավետ լինել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում, սակայն պայքարն այնուամենայնիվ հիմնված է ոչ թե նախաձեռնող, այլ ցուցմունքների վրա հիմնված մոտեցման վրա (reactive response). ուստի, ներկայում իրականացվող քննությունները դժվար թե որևէ կապեր բացահայտեն, քանի որ մարդկանց թրաֆիքինգի գործերով քննությունն ամբողջովին կախված է վկաների ցուցմունքներից, այսինքն՝ նախաձեռնողական բնույթի քննություն (proactive investigation) չի իրականացվում: Ըստ երևույթին, բավարար չափով չի ընկալվում, թե ինչու և ինչպես պետք է հետևողական նախաձեռնությամբ իրականացնել օպերատիվ քննություն:

Թրաֆիքինգը համարվում է զուտ միջազգային խնդիր, սակայն որևէ ուշադրություն չի դարձվում կազմակերպված հանցավորությունը ներպետական մակարդակով քննելու խնդիրներին, որը կարող է այլ հանցագործությունների լուրջ բացահայտումների հանգեցնել, որոնց հետքերով կարելի է գնալ՝ չունենալով անգամ միջազգային համաձայնագրեր:

Թրաֆիքինգի դեմ պայքարի ստորաբաժանման աշխատողները նաև նշեցին, որ վերապատրաստման կարիքները ներկայում բավարարվում են հիմնականում ՀԿ-ների կողմից, որոնք աշխատում են սահմանապահների հետ, սակայն ընդգծեցին, որ վերապատրաստման ծրագրերը հիմնականում միանգամյա բնույթ ունեն և շարունակական չեն:

Ոստիկանության թրաֆիքինգի դեմ պայքարի ստորաբաժանման համար իրավապահ աշխատանքի՝ սահմանափակ ծավալով վերապատրաստում է կազմակերպել ՄՄԿ-ի Մինսկի (Բելառուս) վերապատրաստման կենտրոնը: Թրաֆիքինգի դեմ պայքարի ստորաբաժանումն ունի ստաժավորման փորձ. ուստի այն առավել հակված կլինի որդեգրել արդիական ուսուցանման ինտերակտիվ և հետազոտական մեթոդները՝ դրանք տարածելով ոստիկանության բոլոր մակարդակներում: Նրանք գիտակցում են, որ պրակտիկ վերապատրաստումը կարող է ավելի մեծ արդյունք տալ, և որ տեսություն սովորելով հնարավոր չի լինի համարժեքորեն պայքարել մարդկանց թրաֆիքինգի և հարակից հիմնախնդիրների դեմ:

Թեև ՀԿ-ների հետ պաշտոնական շփումներ չկան, և ստորաբաժանումը չի մասնակցել ՀԿ-ների կազմակերպած դասընթացներին, նրանք պատրաստակամորեն օգնել են դասընթացների նյութերի

կազմմանը: Ստորաբաժանման ղեկավարը նաև նշեց, որ թեև տեղի չի ունենում համատեղ վերապատրաստում մարդկանց թրաֆիքինգի համար պատասխանատու այլ պետական մարմինների հետ միասին, այդուհանդերձ, նման միջոցառումները ողջունելի կլինեն, քանի որ դրանք հնարավորություն կընձեռեն աշխատել գործընկերների հետ և իրականացնել փորձի ու հմտությունների փոխանակում:

Ստորաբաժանման կազմում աշխատում են փորձառու քննիչներ, ովքեր կարող էին օգուտ քաղել, եթե միջազգային գործընկերների մասնակցությամբ համատեղ քննչական թիմեր ստեղծվեին: Նման գործնական մոտեցմամբ տարբեր մեթոդներին ծանոթանալու դեպքում նրանք կարող են այդ մեթոդները կիրառել գործերի քննության ներպետական աշխատանքում:

Հայաստանում հերքվում է (ընդ որում, հնարավոր չեղավ պարզել, թե արդյոք դա քաղաքական, թե՝ մասնագիտական մակարդակով է), որ մարդկանց թրաֆիքինգի արձանագրվող դեպքերը կազմակերպված հանցագործություն են: Քննիչներն ընդգծում են, որ այն “կենցաղային պայմաններում” կազմակերպվող գործունեություն է, և որ մարդկանց գտնում են ծանոթների՝ միմյանց տեղեկություններ փոխանցելու միջոցով:

Գործերի քննությունը նախնական կալանքից հետո շարունակելու ձգտում չկա. ուստի, կազմակերպված հանցավորության իրական կազմակերպիչների մասնակցությունը չի կարող ապացուցվել, որն էլ արդարացնում է այն նախնական ենթադրությունը, թե թրաֆիքինգը “կենցաղային պայմաններում” կազմակերպվող հանցագործություն է: Քանի դեռ կազմակերպված հանցավորություն քննելու մշակույթն ավելի լայն տարածում չի գտել, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում հաջողությունը սահմանափակ կլինի:

<u>Ազգային անվտանգության ծառայություն (ներառյալ սահմանապահները)</u>

ԱԱԾ-ն, որի կազմի մեջ են մտնում սահմանապահները, միակ կառույցն է, որ պատասխանատու է միջազգային սահմաններով Հայաստան ելումուտը հսկելու գործում: ԱԱԾ-ի ներկայացուցիչը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի անդամ է:

Ինչ վերաբերում է ցուցմունքների վրա հիմնված հետաքննությանը (reactive investigations), Հայաստան հայրենադարձվող բոլոր անձանց հարցերով զբաղվում է ԱԳՆ-ի հյուպատոսական վարչությունը, իսկ արտաքսված բոլոր անձանց հետ հարցազրույցներ է անցկացնում ԱԱԾ-ն: Եթե պարզվում է, որ արտաքսված անձը տուժած է, ապա ՀԿ-ներից որևէ մեկի միջոցով նրան առաջարկվում է օժանդակություն և աջակցություն, իսկ քննությունը սկսվում է միայն այն ժամանակ, երբ տուժածն արդեն տեղավորվել է ապաստանում, և դիմել է քննություն անցկացնելու խնդրանքով:

ԱԱԾ-ի ներկայացուցիչները մասնակցում են մարդկանց թրաֆիքինգի թեմայով անցկացվող բոլոր դասընթացներին և աշխատանքային հանդիպումներին և կարող են քննադատաբար գնահատել մինչ այժմ ձեռք բերված առաջընթացը: Մասնավորապես, նրանք նշում են, որ բարձրաստիճան պաշտոնյաներն արդեն քաջատեղյակ են խնդրի մանրամասներին, սակայն շարքային անձնակազմը դեռևս լրացուցիչ ուսուցման կարիք ունի: Ուսուցման շնորհիվ սահմանապահները տեղեկացել են, թե ինչպես պետք է ի հայտ բերել մարդկանց թրաֆիքինգից տուժածներին և աշխատել նրանց հետ: Նրանք նշում են, որ թրաֆիքինգի կանխարգելման գործում ունեն որոշակի հաջողություն:

Սահմանապահ և անձնագրային հսկողության ծառայություններն ունեն վերապատրաստման սեփական ծրագիրը, որը մշակվել է ՀԿ-ների և ՄՄԿ-ի կողմից, և ներառում է թե տեսություն, թե գործնական վարժություններ: ԱՄՔՈՐ-ի կողմից կիրառվող վերապատրաստման մոդուլը, ըստ երևույթին, ներառվել է ուսուցման ծրագրի մեջ, սակայն փորձագետների խմբին կոնկրետ մանրամասներ չտրամադրվեցին:

ԱԱԾ-ում նշեցին, որ ոստիկանության և դատախազների հետ համագործակցությունը դրական է: Նույնը վերաբերում է նաև ԱՊՀ այլ պետությունների հետ հարաբերություններին:

ԱԱԾ-ում ընդամենը մի քանի քննիչներ են առանձնացվել՝ զբաղվելու մարդկանց թրաֆիքինգի գործերով: Ուստի, քննությունների մեծ մասն իրականացնում է ոստիկանությունը: Թուրքիայի հետ դիվանագիտական կապերի բացակայությունը նույնպես նշվեց որպես մտահոգիչ խնդիր, քանի որ թրաֆիքինգի հետևանքով Թուրքիայում հայտնված Հայաստանի քաղաքացիների մասին տեղեկություններ ստանալը հնարավոր չէ:

ԱԱԾ-ի ներկայացուցիչները նշեցին, որ թրաֆիքինգի գործերը քննելու համար ԱԱԾ-ն կիրառել է օրինական բոլոր հնարավոր միջոցները, ներառյալ՝ գործակալական ցանցի ստեղծումը և հեռախոսային գաղտնալսումները, և որ այդ մեթոդների կիրառման պարագայում անգամ թրաֆիքինգ կազմակերպող խմբեր/կառույցներ չեն հայտնաբերվել: ԱԱԾ-ի ներկայացուցիչները պնդում են, թե թրաֆիքինգի ոլորտում կազմակերպված գործունեություն չի ծավալվում այն պատճառով, որ Հայաստանը դեպի ծով ելք չունի, իսկ սահմանները փակ են, թեև նման իրավիճակներում, որպես կանոն, առկա հսկողությունը հաղթահարելու համար մեծանում է կազմակերպված հանցավորության անհրաժեշտությունը:

Արտաքսված անձանց թվի կամ սահմանապահների հայտնաբերած թրաֆիքինգի հնարավոր դեպքերի թվի մասին վիճակագրական տվյալներ չտրամադրվեցին: Պարզ չէր, թե արդյոք այդ տեղեկությունները չեն գրանցվում, թե պարզապես չեն տրամադրվում, սակայն նման տեղեկատվությունը կարող է էապես նպաստել Հայաստանում թրաֆիքինգի հնարավոր մասշտաբների գնահատմանը:

ԱԱԾ-ն ունի վերապատրաստման կենտրոն, ու թեև թրաֆիքինգի իրավական սահմանումը տեղ է գտել կենտրոնի ուսումնական ծրագրում, վերապատրաստումը չի անդրադառնում փաստացի գործերին և անցկացված քննության մանրամասներին: ԱԱԾ-ի ներկայացուցիչներն ընդունեցին, որ անհրաժեշտ են ուսուցանողների ուսուցման դասընթացներ:

Բացի սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկված անձանց ընդունող հայտնի այնպիսի պետություններից, ինչպիսիք են Թուրքիան և ՄԱԷ-ն, ԱԱԾ-ի ներկայացուցիչները նաև նշեցին, որ ապագայում հնարավոր է տուժածների փոխադրումը Բահրեյն և Քուվեյթ: Չունենալով արդեն հայտնի պետություններում քննություն իրականացնելու բավարար մեխանիզմներ, թրաֆիքինգից տուժած անձանց այլ պետություններ փոխադրելու դեպքում իրավասու մարմինների աշխատանքն էլ ավելի կդժվարանա:

<u>Գլխավոր դատախազություն</u>

2003 թվականից ի վեր Գլխավոր դատախազության Կարևորագույն գործերի քննության վարչությունում ստեղծվել է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հատուկ բաժին, որի կազմի մեջ մտնում է չորս դատախազ և քննիչ: Բաժնի պետը փորձագետների խմբին տեղեկացրեց, որ 2004-ից մինչև 2007թ.թ. քրեական գործերի քննությունների թիվը թեև դեռ փոքր է, սակայն ավելացել է:

Քրեական դատավարության գործող օրենսգրքի համաձայն, բաժինը մարդկանց թրաֆիքինգի գործեր քննելու նպատակով համագործակցում է ոստիկանության և ԱԱԾ-ի հետ: Փորձագետների խմբին հայտնեցին, որ համապատասխան մարմինների միջև համագործակցությունը դրական է, և որ ԱԱԾ-ն զբաղվում է միայն ազգային անվտանգությանն առնչություն ունեցող սակավաթիվ գործերով, իսկ ոստիկանությունը՝ մարդկանց թրաֆիքինգի գործերի մեծ մասով:

Քրեական դատավարության օրենսգրքի վերջին փոփոխություններով նախատեսվում է քննչական լիազորությունների փոխանցումը դատախազությունից ոստիկանությանը և ԱԱԾ-ին: Դատախազությունը կշարունակի վերահսկել քննությունը, հարուցել հետապնդում, արգելանքի և կալանքի սանկցիաներ տալ: Մտահոգություն արտահայտվեց այն մասին, որ արժեքավոր գիտելիքների և փորձի կորուստ կարող է տեղի ունենալ, եթե համապատասխան քայլեր չձեռնարկվեն քննիչներին մեկ կառույցից մյուսին փոխանցելու ուղղությամբ: Հաշվի առնելով, որ մարդկանց թրաֆիքինգի գործեր հարուցելու իրավասուն լինելու է Ոստիկանությունը, ինչպես նաև այս հանցագործության անդրազգային բնույթը, մի քանի անգամ նշվեց, որ իրավապահ մարմինների աշխատողներին անհրաժեշտ է վերապատրաստման միջոցով ծանոթացնել քրեական գործերի քննության մեջ իրենց նոր գործառույթներին և դատախազության հետ հարաբերություններին:

Հայաստանում վերջերս ստեղծվել է Դատախազական դպրոց՝ դատախազության գիտաուսումնական կենտրոնի փոխարեն: Դպրոցը ստեղծվել է օրենքով և ստացել անկախ կառույցի կարգավիճակ: Դպրոցն ունի հետևյալ գործառույթները.

1. Նորանշանակ դատախազների վերապատրաստում,
2. Գործող բոլոր դատախազների համար վերապատրաստման դասընթացներ կոնկրետ թեմաներով՝ տարեկան առնվազն մեկ անգամ,
3. Վերապատրաստման դասընթացներ այն գործող դատախազների համար, ում անհատական գնահատականները բավարար չեն եղել,
4. Դատախազության վարչական աշխատողների վերապատրաստում, որը կնպաստի գիտահետազոտական աշխատանքների ծավալմանը:

Փորձագիտական խումբը տպավորություն ստացավ, որ դպրոցը կայացած կառույց է, և որ ղեկավարությունը և դասախոսական կազմը մեծ ցանկություն ունեն բարելավելու իրենց մատուցած ծառայությունները:

Ուսումնական ծրագրերում չեն կրկնվում ԲՈՒՀ-ական դասընթացները, և ջանք է գործադրվում ուսումնական ծրագրերում ներառել գործնական նշանակություն ունեցող այնպիսի թեմաներ, ինչպիսիք են մարդու իրավունքները և նախադեպային իրավունքի առանձնահատկությունները: Մարդկանց թրաֆիքինգը և տուժածների ու վկաների պաշտպանությունը ներառվել է ուսումնական ծրագրերում: Հրապարակվել է ուսումնական ձեռնարկ միջազգային լավագույն պրակտիկայի և չափանիշների վերաբերյալ: Դպրոցը հաջող գործընկերություն է հաստատել Հայաստանում գործող այլ կրթական հաստատությունների, հատկապես՝ Ոստիկանության ակադեմիայի հետ: Արդեն անցկացվել են համատեղ դասընթացներ: Քննչական լիազորությունների փոխանցումը դատախազությունից ոստիկանությանն անհրաժեշտ կդարձնի խորացված դասընթացների անցկացումը ոստիկանության քննիչների համար, և դպրոցը պատրաստակամություն է հայտնել իր դասընթացներին մասնակցելու հնարավորություն ընձեռել այլ ծառայությունների ներկայացուցիչների:

Դատական համակարգը

Հայաստանում ընդհանուր իրավասության դատարաններն են՝ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Հայաստանում կա առաջին ատյանի 17 դատարան, այդ թվում՝ մեկական դատարան Հայաստանի մարզերից յուրաքանչյուրում, և յոթ դատարան Երևանում (մեկը յուրաքանչյուր համայնքում կամ համայնքների խմբում): Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քաղաքացիական, քրեական, զինվորական և վարչական գործերը, լուծում կալանավորման հետ կապված խնդիրներ, տալիս խուզարկության սանկցիաներ, ինչպես նաև կարող են սահմանափակել հաղորդակցության գաղտնիության իրավունքը: Առաջին ատյանի դատարանում գործը քննվում է մեկ դատավորի կողմից՝ միանձնյա:

Հայաստանում կա երկու վերաքննիչ դատարան, որոնցից մեկին ընդդատյա են քաղաքացիական, մյուսին՝ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ բողոքները: Երկուսն էլ գտնվում են Երևանում: Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանն ունի նախագահ և 15 դատավոր: Վերաքննիչ դատարանում գործերը քննվում են երեք դատավորի կազմով: Որոշումները կայացվում են գործը քննող դատավորների ձայների մեծամասնությամբ:

Վճռաբեկ դատարանը Հայաստանի բարձրագույն դատական ատյանն է, որը գտնվում է Երևանում:

Նախատեսվում է 2008թ. վերակազմակերպել Հայաստանի դատական համակարգը: Մասնավորապես, ստեղծվելու են ոչ մեծ ծանրության գործեր քննող դատարաններ: Վերացվելու են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները: Փոխարենը, առաջին ատյանում ստեղծվելու են առանձին վարչական, քաղաքացիական և քրեական դատարաններ: Ողջ երկրի համար ստեղծվելու է մեկ վերաքննիչ դատարան, նստավայրը՝ Երևանում: Առանձին վարչական, քաղաքացիական և քրեական պալատներ են ստեղծվելու նաև վճռաբեկ դատարանում: Ակնկալվում է, որ վերակազմակերպումը կբարելավի դատական համակարգի կարողությունը՝ քննելու և լուծելու ծանր հանցագործությունների գործեր, քանի որ քրեական գործերով կստեղծվեն մասնագիտացված դատարաններ:

Նախքան 2007 թվականին դատական նոր օրենսգրքի ընդունումը չկար նորանշանակ դատավորների վերապատրաստման համապարփակ պաշտոնական ծրագիր, և օրենքով չէր պահանջվում, որ գործող դատավորները մասնակցեն ընթացիկ վերապատրաստման դասընթացների: Նոր օրենսգրքով ստեղծվել է դատական դպրոց, որը պետք է զբաղվի նորանշանակ և գործող դատավորների, ինչպես նաև դատական ծառայողների վերապատրաստմամբ:

Վերապատրաստումը պարտադիր է, և օրենքով անգամ պահանջվում է, որպեսզի բոլոր դատավորները յուրաքանչյուր տարի բարեհաջող ավարտեն դասընթացների նվազագույն ծավալ: Թեև դպրոցին հատկացվել է առանձին տարածք, այն կարող է նաև վերապատրաստման նպատակով օգտագործել երկրի տարբեր մասերում գտնվող դատարանների տարածքները:

Դատարանների նախագահների խորհուրդը դպրոցի առաջարկով հաստատում է ուսումնական ծրագիրը: Խորհուրդը կոլեկտիվ մարմին է՝ կազմված վճռաբեկ դատարանի, վճռաբեկ դատարանի պալատների, վերաքննիչ դատարանների, տնտեսական և առաջին ատյանի դատարանների նախագահներից: Խորհուրդը նաև սահմանում է դպրոցի ծրագրերի մշակման ուղենիշները: Նպատակը մասնագիտացված թեմաներով վերապատրաստում անցկացնելն է: Այս առումով 2007 թվականի ընթացքում վերապատրաստման ծրագրերը նվիրված են եղել հիմնականում դատական նախադեպի տեսությանը և դատական պրակտիկային:

Նշվեց, որ Հայաստանում համապատասխան փորձագետների սահմանափակ թվի պատճառով դպրոցին չի հաջողվել լիովին ծառայել նպատակին:

Փաստաբանների պալատը

Հայաստանում փաստաբանությամբ զբաղվելու լիցենզիա ունի 730 փաստաբան: Փաստաբանների վերապատրաստման կանոնավոր ծրագրեր չկան, բացառությամբ ընկերակցության և ՀԿ-ների կազմակերպած ծրագրերի[13]: Փաստաբանների պալատի նախագահը և անդամները նշեցին, որ թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրության կատարման հիմնական խնդիրն այն է, որ դատական համակարգը բավականաչափ ծանոթ չէ քրեական օրենսգրքի նոր դրույթներին, հատկապես՝ մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ նորմերին:

Անվճար իրավական օգնություն Հայաստանում տրամադրվում է Հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով: Անվճար իրավական օգնություն տրամադրվում է միայն մեղադրյալներին, մինչդեռ հանցագործություններից տուժած անձինք չեն կարող օգտվել այս ծառայությունից: Դատարաններում տուժածների շահերի ներկայացումը, որպես կանոն, ապահովում են ՀԿ-ները: Կառավարության կողմից մշակվում են նոր փոփոխություններ, որոնցով կլուծվի այս խնդիրը, և Հանրային պաշտպանի գրասենյակի ծառայություններից կկարողանան օգտվել նաև տուժածները:

Աշխատանքային տեսչությունը

Հայաստանում կա աշխատանքի 150 տեսուչ (ԱՏ), որոնցից ոմանք մասնակցել են ստանդարտների վերաբերյալ ԱՄԿ-ի կազմակերպած դասընթացներին: Մինչ օրս նրանք չեն վերապատրաստվել հարկադիր աշխատանքի նպատակով թրաֆիքինգի ենթարկված անձանց հայտնաբերման, ուղղորդման և վերաինտեգրման թեմաներով:

Ընդունելով մարդկանց թրաֆիքինքի գոյությունը, աշխատանքի տեսուչները պնդում են, թե Հայաստանում հարկադիր աշխատանքի նպատակով թրաֆիքինգ չկա, և որ մարդկանց թրաֆիքինգն առավել հաճախ դրսևորվում է սեռական շահագործման նպատակով կանանց ՄԱԷ թրաֆիքինգի ենթարկելու ձևով: Տարբեր մասնագետներ նշում են, որ հարկադիր աշխատանքի նպատակով ներպետական թրաֆիքինգ գոյություն չունի՝ միաժամանակ ընդունելով, որ հայերի հարկադիր աշխատանքային շահագործում տեղի է ունենում Ռուսաստանում: Սա զգայուն խնդիր է՝ հաշվի առնելով երկու պետություններում աշխատուժի նկատմամբ վերաբերմունքի տարբերությունները, սակայն հիմքեր կան համարելու, որ հարաբերությունները համագործակցային են:

Հաշվի առնելով հանցավոր գործունեություն հայտնաբերելու և դրա մասին զեկուցելու՝ ԱՏ-ների պարտականությունը, ինչպես նաև թրաֆիքինգից տուժած անձանց հայտնաբերելու և ուղղորդելու գործում նրանց հնարավոր դերակատարումը, շատ արդյունավետ կլիներ զարգացնել մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ նրանց գիտելիքները և ընկալումները: Այդ կերպ կզարգանար ԱՏ-ների կարողությունը՝ հավուր պատշաճի արձագանքելու բացահայտված գործերին և հանցավոր գործունեության կասկածներին: Աշխատանքային տեսչությունը միայն վերջերս է ստեղծվել: Թեև տեսչության լիազորություններում ուղղակիորեն նշված չէ մարդկանց թրաֆիքինգը, այս թեմայով կրթության և վերապատրաստման ոլորտում ներպետական ու միջազգային մակարդակով

[13] Առաքելությունը տեղեկացվեց, որ ներկայում իրագործվում է ԵՄ կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցության ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է Հայաստանում փաստաբանների դպրոց հիմնադրել:

ներդրումները հնարավոր կդարձնեն ուսումնասիրությունների միջոցով հստակեցնել, թե որքանով է տարածված աշխատանքային թրաֆիքինգը:

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

i) *SWOT (ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ) վերլուծություն*

Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի գծով վերապատրաստման խնդիրների լուծումը մինչ օրս հիմնականում կազմակերպվել է ՀԿ-ների ջանքերով և, չնայած դրա կարևորությանը, այդ վերապատրաստումը չի եղել համակարգված և շարունակական: Անհրաժեշտ է առավել համապարփակ և համակարգված արձագանք, որպեսզի Հայաստանի իրավապահ մարմինների գործնական ջանքերով արդյունավետորեն կիրարկվի երկրում վերջերս ընդունված համարժեք օրենսդրությունը: Այդ նպատակով կպահանջվի վերապատրաստման համապարփակ փաթեթ ոչ միայն հիմնական մարմիններում աշխատանքի անցնող սկսնակների, այլև այդ օղակներում արդեն աշխատող փորձված կադրերի համար:

Ուստի, առաջարկվում է, որպեսզի միջազգային հանրությունը՝ սերտորեն համագործակցելով Հայաստանի Հանրապետության կառավարության հետ, օժանդակի և աջակցի իրավապահ բոլոր մարմինների համար վերապատրաստման ընդգրկուն փաթեթի մշակմանը:

Հայաստանում առկա են լուրջ հիմքեր մարդկանց թրաֆիքինգի թեմայով վերապատրաստման ծրագիր մշակելու համար: Երկրում սկսել է ձևավորվել վերապատրաստման/ուսուցման մշակույթ, և բոլոր համապատասխան մարմիններն այս նպատակով հատուկ կառույցներ ունեն՝ համալրված փորձված ու արհեստավարժ կադրերով: Նման կառույցների գոյությունն արդեն հիմք է տալիս վերապատրաստման ընդգրկուն փաթեթ ներդնելու համար: Առկա հաստատությունների ուժեղ կողմերը, սակայն, միաժամանակ դրանց ամենաթույլ կողմերն են: Ներկայումս իրականացվող վերապատրաստումը պասիվ և անհատական նախաձեռնությունը բավարար չափով չխրախուսող բնույթ ունի, որի պայմաններում ուսուցանողի և ուսուցանվողի միջև պրակտիկ շփումները չեն խրախուսվում: Եթե լրջորեն չփոխվեն ուսուցման և վերապատրաստման մոտեցումները, անհրաժեշտ դինամիկ ծրագրի մշակման ճանապարհին կառաջանան էական խոչընդոտներ:

Ուստի, առաջարկվում է փուլ առ փուլ մշակել վերապատրաստման ուսումնական ծրագիր՝ նախ միջազգային ուսուցանողների միջոցով երկրում ներդնելով վերապատրաստման մեթոդներ: Ապա, իրականացնել տեղացի ուսուցանողների ուսուցում (training of trainers), որպեսզի նրանք դասընթացը համապատասխանեցնեն տեղական պահանջներին և մատուցեն այն: Ի վերջո, եռամյա ժամանակահատվածի ավարտին առկա ուսումնական ծրագրում ներառված կլինի վերապատրաստման փորձարկված և ստուգված մեթոդաբանություն: Նման գործընթացի միջոցով կերաշխավորվի մարդկանց թրաֆիքինգի թեմայով վերապատրաստումների շարունակականությունը Հայաստանում:

Վերապատրաստումների առկա մշակույթից զատ, անհրաժեշտ է վերանայել մարդկանց թրաֆիքինգի գործերի քննության, քրեական հետապնդման և դատապարտման ոլորտում ներկայում գործածվող ընթացակարգերը: Հայաստանում առկա գործերը հենվում են բացառապես վկաների ցուցմունքների վրա, և անհրաժեշտ է զարգացնել իրավապահ մարմինների պաշտոնյաների, դատախազների և դատավորների հմտությունները՝ կիրառելու քննչական աշխատանքի ժամանակակից մեթոդներ, հատկապես օպերատիվ տվյալների հիման վրա իրականացվող քննություններ վարելիս:

Ուստի, առաջարկվում է վերապատրաստման ուսումնական ծրագրերում ներառել նյութեր՝ նվիրված ոչ միայն տուժածների հայտնաբերմանը, այլ նաև իրավապահ մարմինների հետևողական նախաձեռնությամբ իրականացվող քննություններին, հանցավոր գործունեությունը կանխելու նպատակով իրականացվող քննություններին, ֆինանսական քննություններին, քննության հատուկ մեթոդներին և քննչական համատեղ թիմերին, ինչպես նաև այլ խնդիրների:

Մարդկանց թրաֆիքինգը միաժամանակ և ներպետական, և անդրազգային բնույթ ունի, և ներկայումս դժվարություններ են առաջանում հետևյալ ոլորտներում. i) ներպետական մակարդակով թրաֆիքինգի դեպքերի նույնացում, և ii) միջազգային մակարդակով միջազգային գործընկերների հետ համատեղ քննությունների անցկացում:

Ուստի, առաջարկվում է վերապատրաստման ուսումնական ծրագրերում ներառել համատեղ, փոխադարձ ուսուցում ներպետական և տարածաշրջանային մակարդակներով, ինչպես նաև խրախուսել/կազմակերպել ուսումնական այցեր, որոնք կնպաստեն միջազգային համատեղ քննությունների անցկացմանը:

Փորձագետների խումբը հանգեց այն կարծիքի, որ վերոհիշյալ նպատակները լավագույնս կարելի է իրագործել վերապատրաստման այնպիսի ծրագիր մշակելու և իրականացնելու միջոցով, որը կարող է կազմվել հետևյալ հաջորդականությամբ:

ii) Ծրագրի նպատակը

“Ստեղծել տեղական կառույցներին պատկանող և տեղական մակարդակով կառավարվող վերապատրաստման ծրագիր, որը կծառայի Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և հետապնդման գործին, ինչպես նաև տուժածների պաշտպանության հարցերով պատասխանատու բոլոր իրավապահ մարմինների կարիքների բավարարմանը”:

iii) Ծրագրի սկզբունքները

- **Մշտական, լիարժեքորեն ֆինանսավորվող, հատուկ այդ նպատակի համար առանձնացված աշխատակազմ.**
  - Այդ կերպ հնարավոր կլինի երաշխավորել մարդկանց, ժամանակի, գումարների և այլ միջոցների առկայությունը՝ ի տարբերություն ներկայում առիթից առիթ, մասնակի ֆինանսավորմամբ և առանց համակարգման իրականացվող միջոցառումների,
  - Աշխատակազմը պետք է լրիվ դրույքով զբաղվի այս ծրագրի իրականացմամբ՝ միաժամանակ չունենալով այլ պարտականություններ, որոնք գերակա ոլորտներից շեղում են աշխատողների ուշադրությունը,
  - Այս կերպ նաև հնարավոր է հատուկ առանձնացված կառույց ունենալ, որին կուղղվեն հարցումները, դիմումները, ծառայությունները և այլն,
  - Փորձառու ավագ կադրերի առկայության պայմաններում կառավարությունը կարող է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակներում դիմել նրանց՝ խորհուրդներ ստանալու համար:

- **Առնվազն երկամյա ծրագիր.**
  - Հստակորեն սահմանված ժամկետներով, գերակայություններով և արդյունքով, մշտական ծրագիրը կապահովի շարունակականություն և հետևողականություն՝ միաժամանակ բարձրացնելով վստահությունը մասնակցող իրավապահ մարմինների շրջանում,

- Վերապատրաստումն անպայմանորեն երկարաժամկետ միջոցառում է: Արդյունավետ վերապատրաստում հնարավոր չէ ստանալ ցաքուցրիվ, չհամակարգված և չգնահատվող աշխատանքների միջոցով: Վերապատրաստման/ուսուցման արդյունքները պետք է գնահատել և դրանցից դասեր քաղել: Դրա համար ժամանակ է անհրաժեշտ:

- **Համատեղ հովանավորություն (պետական և միջազգային)՝ շարունակականություն ապահովելու նպատակով.**

- Մնայուն ազդեցության համար վերապատրաստման ծրագիրը պետք է խորապես արմատավորվի հայաստանյան ներպետական կառույցներում,
- Սկզբում գործընթացը կարող է ծավալվել՝ միջազգային փորձագետների հետ աշխատելու նպատակով ներգրավելով ծրագրի տեղական գործընկերների,
- Տեղի մասնագետները պետք է աստիճանաբար իրենց վրա վերցնեն վերապատրաստման ծառայությունների կառավարումը և մատուցումը՝ այդ կերպ դառնալով հմուտ ֆասիլիտատորներ և թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետներ,
- Ծրագրի ընթացքում պարտականությունների փոխանցումը պետք է կատարվի տեղական և միջազգային կադրերի միջև համաձայնեցված որոշակի ժամանակացույցի հիման վրա:

- **Իրավապահ մարմիններում ուսուցանողների ընտրություն և ուսուցանողների ուսուցման լայնամասշտաբ աշխատանք.**

- Բոլոր իրավապահ մարմիններում հավանական ուսուցանողներ ընտրելը կնպաստի վերապատրաստման հմտությունների փոխանցմանը և ծրագրերի շարունակականությանը,
- Նրանց կարողությունները զարգացնելու համար կիրականացվի ուսուցանողների ուսուցում,
- Ծրագրի աշխատողներն ընթացիկ օժանդակություն կցուցաբերեն և մասնագիտական գիտելիքներ կհաղորդեն ուսուցանողներին,
- Այնուհետ, ուսուցանման հմտությունների տիրապետող կադրեր կլինեն բոլոր իրավապահ մարմիններում՝ երաշխավորելով կոնկրետ կարիքների հիման վրա ընթացիկ վերապատրաստումների անցկացումը,
- Ծրագրի ընթացքում պարբերաբար կանցկացվեն աշխատանքային հանդիպումներ, որոնց շրջանակում օժանդակություն կցուցաբերվի ուսուցանողների միջև տեղեկությունների փոխանակման, միջգերատեսչական կապերի ամրապնդման և համագործակցության հարցերում:

- **Ուսուցման համապարփակ գնահատում և մոնիտորինգ.**

- Վերապատրաստման ծրագրերի գնահատումը պետք է իրականացնել երկու ուղղություններով.
  i) Դասընթացի մասնակիցների գնահատում դասընթացից առաջ և հետո,
  ii) Վերապատրաստման արդյունքների երկարաժամկետ որակական և քանակական գնահատումներ:

- **Վերապատրաստման մասնակցային, ինտերակտիվ մեթոդների ներդրում.**

- Մասնագիտական կառույցների կողմից ներկայում կիրառվող մեթոդներն արտացոլում են դասավանդման հնացած դիդակտիկ մոտեցումները, որոնց պայմաններում չի խրախուսվում քննադատությունը, վերլուծությունը կամ հարցադրումները,
- Թրաֆիքինգի դեմ պայքարի համար անհրաժեշտ են ոչ միայն երևույթի մտավոր ընկալում, օրենսդրական դաշտ և իրավապահ մարմինների աշխատանք, այլև ինտենսիվ գործնական կիրառություն, ստեղծագործական մոտեցում և հատուկ միջոցառումներ,

- Մեծահասակներն առավել արդյունավետորեն կարող են սովորել “կատարելու”, քան “լսելու” և “տեսնելու” միջոցով: Նրանց անհրաժեշտ է պրակտիկ ուսուցում, որի շրջանակներում նրանք կկարողանան սեփական փորձի հիման վրա գնահատել սովորածը,
- Առկա կադրերին անհրաժեշտ է գիտելիքների և հմտությունների զարգացումը համադրել վարքագծի փոփոխության հետ, որպեսզի սովորածը կիրառվի պրակտիկայում,
- Վերապատրաստման հաջողության համար շատ կարևոր են մասնակցային ժամանակակից մեթոդները, ուսուցանողների/վարողների հմտությունը, ինտերակտիվ մեթոդների գործածությունը, ինչպես նաև թեմային վերաբերող արդիական նյութերի մատուցումը:

Կարճաժամկետ միջոցառումներ

Ստորև շարադրված են ծրագրի առաջին փուլում իրականացվելիք առաջնահերթ միջոցառումները: Գոյություն ունի վերապատրաստման նյութերի լուրջ բազա, որը, սակայն, պետք է տեղայնացնել՝ ելնելով Հայաստանի իրողություններից: Որոշ դեպքերում գուցե անհրաժեշտ կլինի նոր նյութեր մշակել՝ կատարելագործելու առկա նյութերը, սակայն կարևոր է նշել, որ անհրաժեշտ չի լինի մշակել լիովին նոր ուսումնական ծրագրեր և նյութեր:

Կարևոր կլինի խնդրի կարևորության գիտակցում ապահովել՝ ծրագրի ժամկետներում հնարավորինս շուտ մեկնարկելով վերապատրաստման առաջին փուլը: Առաջին դասընթացի հիման վրա հնարավոր կլինի անցում կատարել հետագա դասընթացներին՝ մանրակրկիտ գնահատումների և ուսումնասիրությունների միջոցով ապահովելով դրանց թեմատիկ առնչությունը և կիրառելիությունը:

Կարևոր կլինի նաև բանակցել վերապատրաստում կազմակերպող այլ կառույցների հետ՝ բացառելու կրկնողությունը և դադարեցնելու միանգամյա անիմաստ ծրագրերի իրականացումը:

ա) Ընտրել վերապատրաստմանը վերաբերող նյութեր.

Ստորև ներկայացված են ԵՄ ստանդարտներին համապատասխան մշակված նյութերի օրինակներ: Կան բազմաթիվ այլ աղբյուրներ, որոնք նույնպես կարող են օգտագործվել.

i. “Թրաֆիքինգի դեմ պայքարի ձեռնարկ իրավապահ մարմինների համար” ICMPD/ՄԱԶԾ 2006.
ii. “Ձեռնարկ թրաֆիքինգի դեմ պայքարում ներգրավված անձանց համար” ICMPD 2006.
iii. “Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ ուսուցողական նյութեր դատավորների և դատախազների համար”, ICMPD 2004.
iv. “Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ձեռնարկ” UNODC 2006.
v. “Ձեռնարկ իրավապահ մարմինների համար՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի լավագույն փորձի վերաբերյալ”, ՄԱԶԾ 2003:

բ) Թարգմանություն.

Երբ համապատասխան նյութերն ընտրված կլինեն, անհրաժեշտ կլինի և ուսուցանողների, և մասնակիցների համար որոշ նյութեր թարգմանել հայերեն:

գ) Տեղայնացնել՝ հաշվի առնելով առանձնահատկությունները (գործնական վարժություններ, օրենսդրություն և այլն).

Դա անհրաժեշտ է՝ երաշխավորելու գործնական վարժությունների, օրենսդրական հղումների և օրինակների մեջ օգտագործվող նյութերի համապատասխանությունը տեղի իրականությանը և առնչությունը թեմային: Դրանք նույնպես անհրաժեշտ է թարգմանել:

դ) Բանակցել իրավապահ մարմինների, ինչպես նաև համապատասխան այլ կազմակերպությունների (Աշխատանքի տեսչության, ՀԿ-ների և այլն) մասնակցության շուրջ.

Թեև վերապատրաստումը նախատեսված է իրավապահ մարմինների աշխատողների համար, յուրաքանչյուր դասընթացի ժամանակ պետք է սահմանափակ թվով տեղեր հատկացվեն այլ մասնակիցների, ովքեր մասնագիտական հետաքրքրություն ունեն ընդլայնելու մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ իրենց պատկերացումները և կարող են իրենց գիտելիքներով ու փորձով օգտակար լինել դասընթացին:

Դա հնարավորություն կընձեռի միջառարկայական ուսուցում կազմակերպել և հասկանալ, թե թրաֆիքինգի դեմ պայքարի համար ինչ տարատեսակ ծառայություններ և հմտություններ են անհրաժեշտ:

ե) Համագործակցություն ՄՄԿ-ի հետ՝ վերապատրաստման առկա ծրագրերի միջև կրկնողությունը կրճատելու, և բանակցություններ ծրագրի մեջ ՄՄԿ-ի վերապատրաստումն ընդգրկելու ուղիների շուրջ.

ՄՄԿ-ն՝ որպես միգրացիայի խնդիրներով զբաղվող միջազգային կազմակերպություն, իր լիազորություններով շատ կարևոր դերակատարում ունի: Սխալ կլիներ չապահովել համագործակցություն և համակարգում: Վերապատրաստման ծրագրերում անհրաժեշտ է խուսափել կրկնողությունից, հատկապես՝ սահմանապահներին վերապատրաստելիս:

զ) Իրականացնել առաջին ընդհանուր դասընթացը՝ իրավապահ բոլոր ծառայությունների համար առանձին-առանձին, միջազգային ուսուցանողների ներգրավմամբ: Ծրագրի գործընկերները կաշխատեն իրավապահ մարմինների որոշակի խմբերի հետ: Առաջին դասընթացի հիմնական նպատակը կլինի.

i) Փորձարկել և վերանայել նյութերը/բովանդակությունը/մեթոդները,
ii) Պարզել, թե ինչ ճշգրտումներ/լրացումներ են անհրաժեշտ բովանդակության և մեթոդաբանության մեջ,
iii) Ուսուցանողների ուսուցման ծրագրի համար բացահայտել հնարավոր թեկնածուների:

է) Բոլոր վերապատրաստվողների համար աշխատանքային հանդիպում՝ կապերի հաստատման և վերապատրաստման ծրագրի վերանայման նպատակով.

Բացի դասընթացներից առաջ մասնակիցների համակարգված գնահատումից, ինչպես նաև յուրաքանչյուր դասընթացի վերաբերյալ նրանցից համակարգված կերպով արձագանքներ ստանալուց և գնահատելուց, կարևոր կլինի բոլոր վերապատրաստվողներին հրավիրել մեկ կամ մի քանի, ոչ պաշտոնական աշխատանքային հանդիպումների՝ քննարկելու դասընթացների մատուցմանն ու բովանդակությանը վերաբերող հարցեր:

Նման աշխատանքային հանդիպումը կարող է անցկացվել առաջին դասընթացի ավարտից մի քանի շաբաթ կամ ամիս անց: Այդ կերպ հնարավոր կլինի խորհել արդյունքների շուրջ և փորձարկել դասընթացի ժամանակ ստացված գիտելիքների կիրառելիությունը:

Աշխատանքային հանդիպումը նաև միջգերատեսչական քննարկումների և կապերի խորացման հնարավորություն կընձեռի:

ը) Գնահատել գործընթացը[14].
Նույնչափ կարևոր է ծրագրի աշխատողների կողմից իրականացվող գնահատումը, որը ներառում է դասընթացի նախապատրաստման, մատուցման և գնահատման լիարժեք վերլուծություն՝ ապահովելու համար ընթացակարգերի և նյութերի վերանայումը նախքան վերապատրաստման հաջորդ փուլի մեկնարկը:

թ) Հետագա դասընթացների համար կարիքների և բովանդակության որոշում.
Սա կարվի վերը նշված միջոցառումներին զուգահեռ:

Ակնկալվում է, որ առավել բարձրաստիճան պաշտոնյաների համար անհրաժեշտ կլինեն "մասնագիտացված" դասընթացներ:

Միջնաժամկետ միջոցառումներ

Ծրագրի սկզբնական, կարճաժամկետ հատվածում իրականացված միջոցառումները կիրականացնեն ծրագրի աշխատողները, մինչդեռ միջնաժամկետ հատվածում միջոցառումներն ավելի շատ ուղղված կլինեն ներպետական մակարդակով ծրագրի շարունակականության ապահովմանը՝ զարգացնելով առանց միջազգային օժանդակության դասընթացներն անցկացնելու կարողությունները: Այս նպատակն իրագործելու համար նախանշվել է յոթ առանձին փուլ.

ա) Առկա նյութերի ձևափոխում
Սկզբնական փուլում յուրաքանչյուր դասընթացից հետո անցկացվող գնահատման հիման վրա ծրագրի աշխատողները կվերլուծեն դասընթացների մասնակիցներից ստացված դիտողությունները և առաջարկությունները: Վերլուծությունից հետո, հաշվի առնելով նաև ուսուցանողների փորձը, վերապատրաստման առկա նյութերը կվերանայվեն՝ համապատասխանեցվելով տեղական կարիքներին ու պահանջներին:

բ) Ուսուցանողների ուսուցման մեթոդների մշակում և կատարելագործում
Ծրագրի առաջին փուլի շրջանակներում իրականացված վերապատրաստման նպատակներից է՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի խնդիրներին ավելի լավ տիրապետող իրավապահ մարմինների պաշտոնյաների, դատախազների և դատավորների ընտրությունը: Այնուհետ, նրանց հնարավորություն կընձեռվի տեղական ուսուցանողներ դառնալ: Քանի որ ապագա ուսուցանողներն արդեն ավարտած կլինեն սկզբնական դասընթացը և, ամենայն հավանականությամբ, առօրյա աշխատանքում առնչվելիս կլինեն մարդկանց թրաֆիքինգի խնդիրների հետ, անհրաժեշտ չէ հատուկ ուշադրություն դարձնել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի տեխնիկական կողմին: Այնուհանդերձ, ծրագրի շրջանակներում անհրաժեշտ կլինի նրանց ծանոթացնել դասավանդման ժամանակակից մեթոդներին: Ծրագրի աշխատողները պետք է մշակեն հայաստանյան ուսուցանողներին հարմար ծրագիր:

գ) Ուսուցանողների ուսուցման դասընթացների անցկացում
Ուսուցանողների ուսուցման ծրագրի բովանդակությունը պարզելուց հետո ծրագրի միջազգային համակարգողը ծրագրի տեղական աշխատողների օժանդակությամբ կվերապատրաստի մասնակից կառույցների բավարար թվով ներկայացուցիչների՝ որպես ապագա ուսուցանողների, ներառյալ առնվազն ոստիկանության, սահմանապահների/ԱԱԾ-ի, դատախազության ներկայացուցիչների և

[14] Վերապատրաստման գնահատման գործընթացների մշակումը գնահատման մեթոդներին նվիրված կարճատև դասընթացներ կազմակերպելու լրացուցիչ հնարավորություններ կընձեռի:

դատավորների: Ինչպես և ծրագրի շրջանակներում իրականացվող վերապատրաստման բոլոր դասընթացների պարագայում, այս դեպքում ևս վերապատրաստվողներն ակտիվորեն մասնակցելու են ծրագրի վերանայմանը: Այս փուլում, երբ դասընթացը վերաբերում է դասավանդման մեթոդներին և միջոցներին, բոլոր կառույցները կմասնակցեն միևնույն դասընթացներին: Այդ կերպ նաև հնարավորություն կստեղծվի բարելավելու կապերը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող տեղական փորձագետների միջև:

դ) Ուսուցանողների կողմից դասընթացների անցկացնում իրենց ոլորտներում

Ուսուցանողների ուսուցման դասընթացների ավարտից հետո ներպետական մակարդակով կներկայացվի թրաֆիքինգի թեմայով ընդհանուր դասընթացների երկրորդ շարքը՝ նախատեսված մարդկանց թրաֆիքինգի գործեր քննող սկսնակ աշխատողների համար: Այս դասընթացները կկազմակերպվեն առանձին կառույցների մակարդակով. վարողները կլինեն նոր վերապատրաստված ուսուցանողները: Այս փուլին կհետևեն միջազգային փորձագետները, որոնք դասընթացի մասնակիցների հետ կգնահատեն դասընթացների և ուսուցանողների արդյունավետությունը:

ե) Վերանայում և գնահատում

Տեղական ուսուցանողների կողմից անցկացվող դասընթացների առաջին շարքն ավարտելուց հետո միջազգային գնահատողների ներգրավմամբ կիրականացվի դասընթացների վերանայում և գնահատում: Գնահատումը հնարավորություն կընձեռի անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ճշգրտումներ կատարել նյութի և դասավանդման մեթոդների մեջ՝ նախքան դրանք ծրագրի երրորդ փուլում վերապատրաստման ներպետական կառույցների ուսումնական ծրագրում ընդգրկելը:

զ) Մասնակցություն վերապատրաստման տարածաշրջանային ծրագրերին

Հայաստանի համար հատուկ ծրագրեր մշակելուց հետո կարելի է անցկացնել տարածաշրջանային միջոցառումներ՝ հրավիրելով թրաֆիքինգի առումով նմանատիպ խնդիրներ ունեցող այլ պետությունների ներկայացուցիչների: Այս դասընթացները կներկայացնեն տեղացի ուսուցանողները: Հաջողվելու դեպքում դասընթացների շնորհիվ կբարելավվեն կապերը, և ծրագրի միջոցառումները կընդլայնվեն՝ ներառելով այլ պետություններ:

է) Նախաձեռնել համագործակցություն տվյալների հավաքագրման/հետազոտությունների ոլորտում

Որպես ծրագրի ընթացիկ աշխատանք, տվյալների հավաքագրման և տարածման, ինչպես նաև վերլուծական մեթոդների ներդրման գործում աջակցություն է ցուցաբերվելու իրավասու ներպետական մարմիններին: Վերապատրաստման միջոցով կարող են նախատեսվել տեղեկությունների փոխանակման մեխանիզմներ, որոնք կներդրվեն համապատասխան կառույցներում՝ ապահովելով Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի քննության/հետապնդման բոլոր փուլերի էլ ավելի լիարժեք ընկալում:

Երկարաժամկետ միջոցառումներ

ա) Վերապատրաստման նյութերը ներառել այնպիսի կառույցների պաշտոնական ուսումնական ծրագրերում, ինչպիսիք են՝ ոստիկանության ակադեմիան, Դատախազական և Դատական դպրոցները:

<u>Միջոցառումներ.</u>

- Վերանայել առկա ուսումնական ծրագրերը և գնահատել դրանց օգտակարությունն իրավապահ մարմինների համար՝ սեփական նախաձեռնությամբ մարդկանց թրաֆիքինգի գործեր քննելու և հետապնդելու հարցում (proactive investigation and prosecution):
- Մշակել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով դասընթացներ, որոնցում կկարևորվեն տուժածների կարիքները՝ միաժամանակ ուշադրություն դարձնելով թրաֆիքինգի կազմակերպիչներին հետապնդելու, հետաքննելու և ձերբակալելու խնդրին՝ ստիպված չլինելով հենվել բացառապես տուժածների համագործակցության և ցուցմունքների վրա:
- Հայաստանի գիտական, իրավական և իրավապահ շրջանակներում գտնել այն առկա ռեսուրսները, որոնք կնպաստեն նոր ուսումնական ծրագրերի ներդրմանը:
- Մարդկանց թրաֆիքինգի թեման դասավանդողներին ծանոթացնել դասավանդման ժամանակակից ինտերակտիվ մեթոդներին և միջոցներին:

բ) Անցկացնել ուսուցանողների լրացուցիչ ուսուցում՝ ապահովելու քաղված դասերի ընդգրկումը վերապատրաստումների ներպետական ուսումնական ծրագրերում, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության շարունակականությունը:

գ) Միջգերատեսչական հանձնաժողովի (ՄԳՀ) կարողությունների զարգացում:

<u>Միջոցառումներ.</u>

- Օժանդակել ՄԳՀ-ի կարողությունների զարգացմանը, որպեսզի այն կարողանա հիմնավորապես պարզել և Վարչապետի աշխատակազմին ներկայացնել տեղեկություններ այն մասին, թե պետական, իրավապահ մարմինների և հասարակական կազմակերպություններին վերապատրաստելու և նրանց կարողությունները զարգացնելու առումով որոնք են առաջնահերթ խնդիրները:
- Աջակցել ՄԳՀ-ին՝ մշակելու Հայաստանի իրավապահ մարմինների և վերապատրաստում իրականացնող կառույցների երկարաժամկետ ուսուցման կարիքների միասնական և ընդգրկուն ցանկ, որը ՄԳՀ-ն կօգտագործի վերապատրաստման ծրագրերի համար ֆինանսավորում ապահովելու և դոնորների համակարգումը բարելավելու նպատակով:

դ) Օժանդակել Ողողորդման ազգային մեխանիզմի (ՈՒԱՄ) ստեղծմանը, որը պետք է ներառի հետևյալը[15].

- Թրաֆիքինգի ենթարկված անձանց նույնացում և նրանց նկատմամբ համապատասխան վերաբերմունքի դրսևորում,
- Նրանց աջակցություն ցուցաբերող և պաշտպանություն իրականացնող համապատասխան կազմակերպություններ ուղղորդելու մեխանիզմ,
- Նշված ծառայությունների համապատասխանեցում մարդկանց թրաֆիքինգի քննության և հետապնդման պահանջներին:

<u>Միջոցառումներ.</u>

- Մշակել թրաֆիքինգի ենթարկված անձանց նույնացման ընթացակարգեր, այդ թվում՝ այնպիսի ընթացակարգեր և կանոնակարգեր, որոնք պարտադիր կլինեն գործընթացին մասնակցող բոլոր պետական և հասարակական կազմակերպությունների համար,

[15] ՈՒԱՄ գործընթացը, լիարժեք մասնակցության պայմաններում անցկացնելու պարագայում հնարավորություն կընձեռի լրացուցիչ դասեր քաղել, հատկապես մասնակից կառույցների/կազմակերպությունների տարբեր դերերի և կարողությունների մասին:

- Առաջարկներ մշակել ՄԳՀ-ի ենթակայությամբ աշխատանքային խումբ ստեղծելու վերաբերյալ, որի կազմում կլինեն ոստիկանության, դատախազության, ՀԿ-ների և ԱԱԾ-ի ներկայացուցիչներ: Աշխատանքային խումբը որոշումներ կկայացնի թրաֆիքինգից տուժած անձանց նախնական նույնացման վերաբերյալ և իրավունք կունենա թույլատրելու աջակցության և պաշտպանության միջոցների կիրառումը,
- ՈՒԱՄ-ը ներառել վերապատրաստման ներպետական ուսումնական ծրագրերում:

ե) Կատարելագործել տարածաշրջանային համագործակցությունը մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և արդյունավետ քննության գործում:

<u>Միջոցառումներ.</u>

- Տարածաշրջանի համապատասխան իրավապահ մարմինների հետ համատեղ վերապատրաստման դասընթացներ անցկացնել այնպիսի թեմաներով, ինչպիսիք են՝ տուժածների նույնացումը, նախաձեռնողական քննությունը և օպերատիվ տվյալների հավաքումն ու փոխանակումը:
- Հայաստանում անցկացվող վերապատրաստման ծրագրերին մասնակցելու նպատակով հրավիրել հարևան պետություններում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող կառույցների ներկայացուցիչների:
- Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ուսումնական ծրագրերի ներդաշնակեցման նպատակով սատարել վերապատրաստումներ կազմակերպող կառույցների միջև կապերի սերտացմանը:

Լրացուցիչ առաջարկություններ

Որպեսզի իրավապահ մարմինների համար անցկացվող վերապատրաստումը լինի պահանջված, ճիշտ և արդիական, կարևոր կլինի լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնել մի շարք ոլորտներում: Թե ներպետական մակարդակով, թե արտերկրում երեխաների թրաֆիքինգի և աշխատանքային շահագործման մասին անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ՝ վերապատրաստման, կանխարգելման և քրեական գործերի քննության մեջ ապահովելով փաստերով հիմնավորված տվյալների առկայությունը:

Անհրաժեշտ է նաև ուսումնասիրել թրաֆիքինգի նկատմամբ հասարակության վերաբերմունքը: Կանխարգելման ռազմավարություն մշակելու, հանրությանը կրթելու և իրավապահ մարմինների աշխատողներին վերապատրաստելու համար շատ կարևոր է հասկանալ, թե հանրությունն ինչ կարծիք, գիտելիքներ և մոտեցումներ ունի թրաֆիքինգի խնդրի վերաբերյալ[16]:

[16] Կոսովոյում Կաթոլիկ օգնության ծառայության (Catholic Relief Service) կատարած հետազոտությունների օրինակների համար տես http://www.kopfund.org

5. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Որպեսզի իրավապահ մարմինները Հայաստանում կատարեն մարդկանց թրաֆիքինգի հանցագործությունը կանխելու, տուժածներին պաշտպանելու և հանցագործներին հետապնդելու իրենց պարտականությունները, անհրաժեշտ է ձևավորել վերապատրաստումների ներդաշնակ և ամբողջական կառուցվածք: Վերապատրաստումներն առանց որևէ համակարգման, առիթից առիթ և հիմնականում քաղաքացիական հասարակության կողմից իրականացվելը բացառելու համար ուսուցումը պետք է իրավապահ մարմինների աշխատանքի անբաժանելի մաս դառնա՝ հարմարեցվելով նրանց ընդհանուր և մասնագիտական պահանջներին:

Որպեսզի իրավապահ մարմինների աշխատողները թե՛ ներկայում, թե՛ ապագայում համարժեքորեն վերապատրաստվեն, պետք է ձևավորել ուսուցանողների կադրային բազա: Նրանք պետք է ծանոթ լինեն մեծահասակների կրթության սկզբունքներին, երաշխավորեն բովանդակային նյութի արդիականությունը և թեմատիկ համապատասխանությունը, և վերապատրաստումն անցկացնեն վստահ և արհեստավարժ ձևով:

Սովորական լսարանային աշխատանքով սահմանափակվելու փոխարեն, վերապատրաստումը պետք է ներառի գործնական ուսուցում, պրակտիկ դասեր աշխատանքի ընթացքում, ստաժավորում և ծանոթացում միջազգային կառույցների աշխատանքին:

Անհրաժեշտ է կանոնավորապես հավաքել վիճակագրական տվյալներ, որոնք հաշվի կառնվեն ապագա դասընթացների համար թեմաներ ընտրելիս, ինչպես նաև կազմակերպված հանցավորության դեմ իրավապահ մարմինների պայքարը ծրագրելիս: Կանխարգելման ուղղությամբ առաջին քայլը կարող է լինել թրաֆիքինգի նկատմամբ հասարակության մոտեցումների առկա իրավիճակի ուսումնասիրության անցկացումը, որպեսզի ենթադրությունների, ասեկոսեների և մտացածին պատմությունների փոխարեն հնարավոր լինի ավելի շատ հենվել փաստերի վրա:

Համաշխարհային բնույթ ունեցող այս երևույթի դեմ պայքարելու ուղղությամբ Հայաստանում արդեն ձեռնարկվել են էական քայլեր, որոնք ուղի են հարթել իրավապահ բոլոր մարմինների աշխատանքային կարողությունները հետագայում ևս զարգացնելու համար:

6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.

Հանդիպումներին մասնակցած պաշտոնյաների և կազմակերպությունների ցանկ

- Զյունիկ Աղաջանյան, ԱԳՆ Միջազգային կազմակերպությունների վարչության պետ, Թրաֆիքինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ
- Ենոք Շատվորյան, "Հույս և օգնություն" ՀԿ նախագահ
- Աիդա Առաքելյան, Կաթոլիկ օգնության ծառայություն, Ծրագրերի ղեկավար
- Միքայել Շահինյան, "Ժողովրդավարությունն այսօր" ՀԿ նախագահ, Հասմիկ Էդիլյան, Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրերի պատասխանատու
- Վիկտորիա Ավակովա, Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրերի համակարգող, UMCOR
- Նազարեթ Մնացականյան, ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչություն, Տիգրան Պետրոսյան, նույն վարչության Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի պետ
- Աշոտ Գնդոյան, Ոստիկանության ակադեմիայի ղեկավար
- Աշոտ Նադոյան, Ավագ դատախազ, Վահագն Հարությունյան, Կարևորագույն գործերով քննիչ, Թրաֆիքինգի դեմ պայքարի վարչություն, Գլխավոր դատախազություն
- Արտակ Հարությունյան, Դատախազական դպրոցի տնօրեն, Արթուր Ղամբարյան, Քրեական դատավարության ամբիոնի վարիչ
- Իլոնա Տեր-Մինասյան, ՄՄԿ Երևանի գրասենյակի ղեկավար, Քրիստինե Գալստյան, Ծրագրերի ղեկավար
- Միեր Խաչատրյան, Քրեական գործերով Վերաքննիչ դատարանի նախագահ
- Արման Վարդանյան, Դատական դեպարտամենտի ղեկավար
- Արսեն Մկրտչյան, Դատական դպրոցի տնօրեն
- Ուիլյամ Դագլաս, ՀՀ-ում ԱՄՆ Դեսպանություն
- Ռուբեն Սահակյան, Փաստաբանների պալատի նախագահ
- Նաիրա Ավետիսյան, Երեխաների պաշտպանության ծրագրերի ղեկավար, UNICEF
- Ռուբեն Աբրահամյան, վարչության պետ, Շավարշ Միքայելյան, վարչության պետ, ԱԱԾ, Ալեք Մարկոսյան, ԱԱԾ Միջազգային կապերի վարչության պետի տեղակալ
- Հարություն Հարությունյան, Աշխատանքի տեսչության պետ, Վահան Սիմոնյան, Աշխատանքի և զբաղվածության վարչության պետ, Գևորգ Գևորգյան, Վարչության պետ, Աշխատանքի պետական տեսչություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- Բորիս Խառատյան, Փոխնախագահ, ՀՀ Արհմիությունների կոնֆեդերացիա
- Վալերի Պողոսյան, Փոխգնդապետ, Մնացական Միրզոյան, Վարչության պետի տեղակալ, ԱԱԾ սահմանապահ ծառայություն
- Արտաշես Անդրեասյան, Ոստիկանության Ակադեմիա
- Գորիկ Մխիթարյան, Քրեական հետախուզության վարչության պետ, Վանաձորի ոստիկանություն, Լոռու մարզ
- Արփի Էդիլյան, Հույս և օգնություն ՀԿ Վանաձորի մասնաճյուղի ղեկավար

Հավելված 2.

Լրացուցիչ տեղեկություններ մարդկանց թրաֆիքինգի արդյունքում խախտվող իրավունքների և համապատասխան իրավական փաստաթղթերի վերաբերյալ[17]

Մարդկանց թրաֆիքինգի արդյունքում սովորաբար խախտվում են մարդու հետևյալ իրավունքները	Համապատասխան միջազգային իրավական փաստաթղթեր և հոդվածներ
Առողջապահական և սոցիալական ծառայություններից օգտվելու իրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 22 և 25(1) հոդվածներ □ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 12 □ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 24 □ Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW) հոդված 12 □ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի հոդված 5(e)(iv)
Կրթության և վերապատրաստման իրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 26 □ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 13 □ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 18 □ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 28 և 29 հոդվածներ □ Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW) հոդված 10 □ Կրթության մեջ խտրականության դեմ պայքարի մասին UNESCO-ի կոնվենցիա
Տեղաշարժի ազատության և սեփական բնակության վայրն ազատորեն ընտրելու իրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 13(1) □ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 12(1)
Արժանապատիվ աշխատանքի իրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 23 □ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 8(3) □ Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիա 29 □ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 23(1) □ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 7 □ Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW) հոդված 11
Ստրկությունից ազատ լինելու իրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 4 □ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 8

[17] Սույն աղյուսակը որոշակի փոփոխություններով վերցված է Կանանց թրաֆիքինգի դեմ պայքարի համաշխարհային դաշինքի (Global Alliance Against Trafficking in Women) "*Human Rights Standards for the Treatment of Trafficked Persons*" հրապարակումից և Արդարադատության և ժողովրդավարության ցանցի (Network for Justice and Democracy) հովանու ներքո Օլեիդ Գբադամոսիի հրատարակած "*International Perspectives and Nigerian Laws on Human Trafficking*" աշխատությունից:

	□ Ստրկության մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրությունը ստրկության, ստրկավաճառության, ստրկության ինստիտուտների և ստրկությանը նմանվող պրակտիկայի վերացման մասին
Խոշտանգումների և/կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 5 □ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 7 □ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ պայքարի մասին կոնվենցիա
Խաղաղության և անվտանգության իրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 3
Խտրականությունից զերծ մնալուիրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1, 2 և 7 հոդվածներ
Արդարադատության մատչելիության իրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 6
Ազատ արտահայտվելու և մասնակցելու իրավունքը	□ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19 և 21 հոդվածներ